

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ 2000-2004թթ.

- *ֆաղափակացումը*
- *նյութաբանություն*
- *իրազդեցություն*
- *արդյունք*
- *անելիքներ*

ԵՐԵՎԱՆ
2005

Լրացավ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի պաշտոնավարման 5 տարին:

Ձեզ ներկայացված գրքույկում համառոտ անդրադարձ է կատարված ՀՀ կառավարության կողմից այդ ժամանակահատվածում տարբեր ոլորտներում իրագործված քաղաքականության արդյունքներին՝ նշելով նաեւ կառավարության գործունեության ծրագրով ամրագրված այդ քաղաքականության նպատակը եւ միջնաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերով հաստատված անելիքները հետագա տարիներին, որոնց ուղղությամբ որոշակի աշխատանքներ արդեն սկսված են:



Ես շատ եմ ցանկանում, որ Հայաստանում ոչ մի կառավարություն այսուհետև նախորդից ստացած ծանր ժառանգության մասին չմտածի, այլ մեր ղեկավարության անրացող ղափին ես մի քան ավելացնի, որը ոչ միայն այդ կառավարությանն է անհրաժեշտ, այլև անբողջ հասարակությանն ու ղեկությանը:

Անդրանիկ Մարգարյան


2002թ.

1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԵՂԱՏԱԿԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԵՆԻՔՆԵՐԸ

1.1 Տնտեսական աճ

Տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը եղել է կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական ձեռքբերումներից մեկը: Այն իրագործվել է՝ հատկապես զործարար և ներդրումային միջավայրի բարելավման, համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման աստիճանի բարձրացման, գնային փոփոխականների արդյունավետ կառավարման շնորհիվ:

Արդյունքում՝ 2000-2004 թթ. արձանագրվել է համախառն ներքին արդյունքի տարեկան 10.5 % աճ, որը 1995-99 թթ. նկատմամբ բարձր է եղել մոտ 2 անգամ: Կանխատեսվում է, որ 2005 թ. տնտեսական աճը կկազմի առնվազն 8 %, իսկ առաջիկա միջին ժամկետ հատվածում կկազմի առնվազն 6 %՝ այդպիսով պահպանելով ԱՊՀ տարածաշրջանում վերջին տասը տարիներին աճի առավել բարձր տեմպեր ունեցող երկրների թվում ձեռք բերված առաջատար դիրքերը:




Աղբյուրը՝ ԳԳ ազգային վիճակագրական ծառայություն, ԳԳ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

2004 թ. ՀՆԱ-ի մակարդակը հասել է 1989 թ. տնտեսության մակարդակի 99.6 %-ին և արդեն 2005 թ.՝ կգերազանցի այն: Առաջիկա տարիներին կա-


1. Ըստ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի բյուջետային ուղերձի»՝ 2005 թվականին ծրագրավորվում է 8.0 % տնտեսական աճ:

րելորվելու և եկամուտների առավել հավասար բաշխվածության խնդրի լուծումը: Նշված երկու գործոնների զուգորդումը Էապես կլուծի միջին քաղաքացու բարեկեցության աստիճանը 1990-ականների սկզբի մակարդակին մոտեցնելու հարցը:



Աղբյուրը՝ ԳԳ ազգային վիճակագրական ծառայություն, ԳԳ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարություն

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2004 թ. գերազանցեց 1000 ԱՄՆ դոլարը: Արդեն երրորդ տարին է, որ Հայաստանը ցածր եկամուտներով երկրների թվից անցում է կատարել միջին եկամուտներով երկրների թիվը: Առաջիկա 3 տարիների կառավարության կողմից ծրագրվող տնտեսական աճի արդյունքում՝ 2007 թ.-ին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն գրեթե եռակի կգերազանցի 1999 թ. ցուցանիշը:




Աղբյուրը՝ ԳԳ ազգային վիճակագրական ծառայություն, ԳԳ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարություն

1.2 Ներդրումներ եւ խնայողություններ

Կառավարության ներդրումային քաղաքականությունն ուղղված է եղել ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրումների համար բարենդ-պաստ ներդրումային միջավայրի ձեւավորմանը: Շարունակվել է պետական սեփականությամբ ձեռնարկությունների (դրանց նկատմամբ պետական սեփականության օտարման) մասնավորեցման ճանապարհով ուղղակի օտարերկրյա ներդրումների ներգրավումը: Բարելավվել է օրենսդրական դաշտը, ընդլայնվել է այլ պետությունների հետ ներդրումների փոխադարձ պաշտպանության եւ խրախուսման համաձայնագրերի ընդգրկման դաշտը (առ այսօր ստորագրվել են համաձայնագրեր 32 պետությունների կառավարությունների հետ):

Օտարերկրյա ներդրողների կողմից, 2000-2004 թթ. ընթացքում Հայաստանում իրականացրած օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է 1001.0 մլն ԱՄՆ դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 717.1 մլն ԱՄՆ դոլար: Օտարերկրյա ուղղակի ներդրումների տարեկան միջին աճը 2000-2004 թթ. կազմել է մոտ 20 %:

Արդյունքում, 2000-2004 թթ. անվանական արտահայտությամբ համախառն ներդրումներն աճել են տարեկան միջինում մոտ 21 %-ով:²




Աղբյուրը՝ ԳԳ ազգային վիճակագրական ծառայություն, ԳԳ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն

2. 2004 թ. ցուցանիշը գնահատական է:

Կանխատեսվում է, որ 2005-2007 թթ. ներդրումները ՀՆԱ-ի նկատմամբ կկազմեն միջինում 21-23 %, որոնք կֆինանսավորվեն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջոցների հաշվին:

Այս տարիներին պետական ներդրումային ծրագրերը հիմնականում ուղղված են եղել տրանսպորտային ենթակառուցվածքներին, ոռոգման համակարգին, հանրակրթական ոլորտին, հատկապես՝ դպրոցների հիմնանորոգմանը: 2004 թ. դրանց ծավալը կազմել է շուրջ 138.6 մլն ԱՄՆ դոլար: Հիշյալ ոլորտները առաջիկա տարիներին նույնպես շարունակելու են մնալ պետական ներդրումների հիմնական գերակայությունը:


Խնայողությունների մակարդակի ավելացումը մեծացրել է նաև բանկերի կողմից տնտեսության վարկավորման ծավալները, որոնց տարեկան աճը 2003 թ. սկսած կազմել է տարեկան ավելի քան 20 %: Կանխատեսվում է, որ նույն միտումները կշարունակեն պահպանվել նաև առաջիկա տարիներին:



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ

1.3 Տոկոսադրույքներ


Այս տարիների ընթացքում շուկայական տոկոսադրույքների նվազեցման վրա որոշիչ ազդեցություն են ունեցել պետական պարտատոմսերի շուկայի զարգացումները: Տարեցտարի բարելավման արդյունքում՝ 2004 թ. տեղաբաշխված պետական պարտատոմսերի միջին տարեկան տոկոսադրույքը կազմեց 7.3 %, ինչը 2000 թ. գրանցված եկամտաբերությունից ցածր էր մոտ 3.4 անգամ: 2000 թ. համեմատ՝ պարտատոմսերի ժամկետայնությունը 2004 թ. երկարել է մոտ 4 անգամ:



Աղբյուրը՝ ԳՅ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն

Այս գործոնը նպաստել է վարկային տոկոսադրույքների նվազմանը, չնայած դեռ բարձր է մնում վարկային տոկոսադրույքը: Առեւտրային բանկերի վարկերի տոկոսադրույքը 2004 թ. ընթացքում նվազել է մինչեւ 18.17 %³, ուղղակի դրական ազդեցություն գործելով ներդրումների իրականացման միջավայրի բարելավման վրա: Այն 2000 թ. նկատմամբ նվազել է մոտ 8 տոկոսային կետով:

3. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004թ. հունվար-դեկտեմբերին», ամսական զեկույց



Աղբյուրը՝ ԳԳ կենտրոնական բանկ

1.4 ԳՆԵՐ

2000-2004 թթ. ընթացքում սպառողական գների մակարդակի փոփոխությունը եղել է կառավարելի միջակայքում: Բացառությամբ 2003 թվականի, երբ գների վրա մեծ էր արտաքին շուկաների գնային փոփոխականների ազդեցությունը (պայմանավորված հիմնականում հացամթերքի գների փոփոխությամբ), այն չի գերազանցել օրենքով սահմանված 3 % մակարդակը:

Ծրագրվում է, որ 2005-2007 թթ. նույնպես գնաճը կպահպանվի տարեկան շուրջ 3 % մակարդակի շրջանակում:

1.5 Արդյունաբերություն, գյուղատնտեսություն, ծառայություններ

Վերջին հինգ տարիների ընթացքում արձանագրված տնտեսական աճի պայմաններում ՀՆԱ-ում տեղի են ունեցել կառուցվածքային զգալի տեղաշարժեր: ՀՆԱ-ի աճում մեծ է եղել շինարարության և ծառայությունների ոլորտների ազդեցությունը: Այս երկու ճյուղերը 2000-2004 թթ. ապահովել են 10.5 % տնտեսական աճի 6.4 տոկոսային կետը, իսկ արդյունաբերության և գյուղատնտեսության մասը եղել է հավասար և կազմել է մոտ 3 տոկոսային կետ:

ՀՆԱ-ի կառուցվածքում առանձնահատուկ տեղաշարժ է տեղի ունեցել շինարարության մասով՝ 2000 թ. 10.3 %-ի դիմաց 2004 թ. դրա տեսակարար կշիռը կազմել է 15.3 %:

Վերջին տարիներին, բացի արդյունաբերական ավանդական ճյուղերից, ինչպես ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը, թեթեւ եւ սննդի արդյունաբերությունները, բարձր աճ է արձանագրվել մետաղագործական եւ քիմիական արդյունաբերություններում, ինչպես նաեւ շինանյութերի արտադրությունում:

Ծրագրված է, որ 2005-2007 թթ. ընթացքում մեծ ուշադրություն կդարձվի համախառն ներքին արդյունքի մեջ վերամշակող արդյունաբերության տեսակարար կշռի ավելացմանը: Հատկապես կխրախուսվի արդյունաբերության այն ճյուղերի եւ արտադրությունների զարգացումը, որոնց բնորոշ է ավելացված արժեքի մեծ բաղադրատարր պարունակող եւ արտահանմանը միտված արդյունքների արտադրությունը: Այդ նպատակին հասնելու համար, ինչպես նաեւ արդյունաբերության առաջընթաց զարգացումը ապահովելու եւ նրա տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածքում ավելացնելու նպատակով նախատեսվում է հնարավորինս ընդլայնել տեղական եւ օտարերկրյա ներդրումների ծավալները, զարգացնել եւ խորացնել ներհանրապետական արտադրական կոոպերացիան, ինչպես նաեւ իրականացնել առանձին ընկերությունների վերակառուցման եւ վերամասնագիտացման գործընթաց:

Ագրոպարենային համակարգը այս տարիներին տվել է երկրի համախառն ներքին արդյունքի շուրջ 35%, այդ թվում գյուղատնտեսությունը՝ մոտ 25 %: Ներկայումս ագրոպարենային ոլորտում ձեւավորված է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսական համակարգ, որը ներառում է ավելի քան 338 հազար գյուղացիական տնտեսություն: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 98 % արտադրվում է մասնավոր հատվածի կողմից:

2005-2007 թթ. գյուղատնտեսությունում վարվող քաղաքականությունը կնպաստակառուցի ճյուղի եւ նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ տնտեսավարման ձեւերի զարգացման, արտադրության ռիսկերի նվազեցման ուղղություններով: Բարենպաստ պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման եւ արտահանման համար: Հետեւողական աշխատանք կիրականացվի գյուղատնտեսության վարկավորման բնագավառում առկա խոչընդոտների վերացման եւ փոխառու ֆինանսական միջոցների մատչելիության բարձրացման ուղղությամբ:

Վերջին տարիներին շինարարության ճյուղի աճի տեմպերն աչքի են ընկնում բարձր ցուցանիշներով՝ 2000-2004 թթ. միջին աճը կազմել է մոտ 27 %: Շինարարության ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածքում 2000 թվականից ի վեր 10.3%-ից աճել է մինչեւ 15.3 %:

2005-2007 թթ. ակնկալվում են շինարարության ճյուղի համեմատաբար բարձր աճի տեմպեր: Շինարարությունը կֆինանսավորվի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին եւ ճյուղի տարեկան միջին աճը կլինի առնվազն 7 %:

Այս տարիներին կարելուրվել է նաեւ ծառայությունների ոլորտի զարգացումը, մասնավորապես՝ տրանսպորտի եւ կապի, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ զբոսաշրջության ենթակառուցվածքների ձեւավորումը:

Արդեն 2004 թ. դրությամբ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ակտիվ աշխատում է շուրջ 140 ձեռնարկություն, աշխատատեղերի քանակն աճել է շուրջ 200-ով: ՀՆԱ-ում ոլորտի բաժինն արդեն կազմել է 1,7% (2001-ին՝ ՀՆԱ 0,35%):

Զբոսաշրջությունն իր զարգացման տեմպերով եւ արդյունքներով դարձել է հանրապետության առավել արագ եւ դինամիկ զարգացող ճյուղերից մեկը: Ներգնա այցելությունների թիվը 2000-2004 թթ. կազմել է մոտ 800000, աճը 2001 թ. սկսած՝ պահպանվում է տարեկան 25-30%-ի սահմաններում, ինչը նաեւ ՀՆԱ-ի կառուցվածքում կազմում է ծառայությունների արտահանման աճի գերակշիռ մասը: Ներգնա զբոսաշրջության զարգացմանը զուգահեռ, դինամիկ աճ է արձանագրվել ներքին զբոսաշրջությունում՝ 2000-2004թթ.՝ ապահովվելով 59.9% աճ: ՀՆԱ-ի կառուցվածքում եւ ծառայությունների արտահանման ծավալներով զբոսաշրջությունը հանրապետությունում առաջատար ոլորտներից է:

2005-2007 թթ. ծառայությունների ոլորտում իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու հատկապես՝ գոյություն ունեցող ճանապարհների (ավտոմոբիլային, երկաթուղային) հնարավորությունների արդյունավետ օգտագործման միջոցով ինչպես ներհանրապետական, այնպես էլ միջպետական փոխադրումների ամբողջ ծավալով ապահովվելու, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը եւ զբոսաշրջության ենթակառուցվածքների ձեւավորմանն ու խորացմանը: Նշված քաղաքականությունների ներքո միջնաժամկետ հատվածում ծառայությունների միջին աճը կկազմի մոտ 5.5%:

1.6 Արտահանում

2000-2004 թթ. արտաքին առևտրի քաղաքականությունն ուղղված է եղել ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ տեմպերի ապահովմանը՝ արտահանման կառուցվածքի բազմազանեցմանը (դիվերսիֆիկացմանը):

Ավարտվեց ԱՀԿ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցության գործընթացը: 2003 թ. Հայաստանը դարձավ ԱՀԿ անդամ: ԱՀԿ անդամակցությունն ապահովեց 140-ից ավելի երկրներում հայաստանյան ապրանքների եւ ծառայությունների նկատմամբ ոչ խտրական մոտեցման կիրառումը:


2004 թ. իրականացվել են միջոցառումներ՝ ուղղված Եվրոպական հանձնաժողովի կողմից Հայաստանին շուկայական տնտեսության կարգավիճակի շնորհմանը:

Հայրենական ապրանքների եւ ծառայությունների արտաքին շուկա մուտք գործելու, հայրենական ապրանքների արտահանման ծավալները մեծացնելու համար բարենպաստ պայմանների ապահովման ուղղությամբ իրականացվել է միջազգային առևտրի գործառնությունների եւ տեղեկատվական հոսքերի պարզեցում, համօրինակման ու միասնականացման հնարավորությունների ուսումնասիրում եւ սկսվել է դրանց իրագործումը:

Նշվածի արդյունքում, տնտեսական ազատականության գնահատականի համաձայն՝ Հայաստանը 155 երկրների շարքում զբաղեցնում է 42-րդ տեղը եւ որակվում որպես «հիմնականում ազատ»:

2000-2004 թթ. ապրանքների արտահանման միջին տարեկան ծավալը 1999թ. համեմատ աճել է ավելի քան երկու անգամ եւ կազմել մոտ 510 մլն ԱՄՆ դոլար:

Ապրանքների արտաքին առեւտուրը




Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն

Արտաքին առեւտրաշրջանառության ծավալը 2004թ. կազմել է 2066.0 մլն ԱՄՆ դոլար, աճի տեմպը՝ 105.1%: Ընդ որում, արտահանումը կազմել է 715.0 մլն դոլար, ներմուծումը՝ 1351.0 մլն դոլար: Առեւտրային հաշվեկշիռը բացասական է 636.0 մլն դոլարով:

Ծրագրվում է, որ 2005-2007 թթ. ապրանքների արտահանումն ավելի արագ է աճելու, քան ծառայություններինը. ակնկալվում է, որ ապրանքների արտահանման ծավալների միջին տարեկան աճը կկազմի առնվազն 9%: Ապրանքների եւ ծառայությունների ներմուծման աճի նկատմամբ դրանց արտահանման առաջանցիկ աճի շնորհիվ շարունակվել է բարելավվել զուտ արտահանման բացասական հաշվեմնացորդը՝ 1999 թ. 29 % դիմաց 2003 թ. կազմելով ՀՆԱ-ի 18%: 2004 թ. ինն ամիսներին զուտ արտահանումը կազմել է 395 մլն ԱՄՆ դոլար, կամ ՀՆԱ-ի 17%:

1.7 ԱՇխատանքի վարձատրություն

2000-2004 թ. միջին ամսական աշխատավարձն աճել է մոտ 2 անգամ: Ընդ որում՝ մասնավոր եւ պետական հատվածում արձանագրվել են գրեթե նույն աճի տեմպերը: 2004 թ. մասնավոր հատվածում միջին աշխատավարձը հասել է մոտ 54.4 հազ. դրամի, բյուջետային հատվածում՝ 26.6 հազ. դրամի, իսկ քաղաքացիական ծառայության համակարգում՝ 51490 դրամի:



Աղբյուրը՝ 77 ազգային վիճակագրական ծառայություն

Քաղաքացիական ծառայության համակարգում առկա գերակա մասնագիտություններ ունեցող անձանց միջին աշխատավարձը ոչ պետական հատվածում նույն ժամանակաշրջանում կազմել է 106050 դրամ: Աշխատավարձի նման բարձրացմանը նպաստող գործոնների շարքում կարելի է առանձնացնել ոչ միայն մասնավոր հատվածում, հատկապես՝ շինարարության ճյուղում վերջին տարիներին աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճը, այլև պետական ծառայողների, սոցիալական ոլորտի աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների ավելացումը:

Միջնաժամկետ հատվածում նախատեսվում է շարունակել բյուջետային հիմնարկներում աշխատողների աշխատավարձերի աստիճանական բարձրացումը:

Կարելի է զբաղվածությունից եկամուտների ավելացումը՝ որպես աղքատության հաղթահարման սոցիալապես առավել ընդունելի եւ արդյունավետ եղանակ, կառավարությունն Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացում հատուկ ուշադրություն է դարձնելու զբաղվածության ընդլայնման միջոցառումներին:

Միջնաժամկետ հատվածում ոլորտում իրականացվող քաղաքականությունն առաջին հերթին ուղղված է լինելու զբաղվածության աճի խթանմանը: Այն հիմնականում իրականանալու է գործարարության խթանման համար

համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծմամբ, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների կրճատմամբ ու լիցենզավորման ընթացակարգերի պարզեցմամբ, աշխատանքային հարաբերությունների հետագա օրենսդրական կարգավորմամբ եւ այլն: Աշխատանքային հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ընդունվել է նոր «Աշխատանքային օրենսգիրք» եւ ակտիվ աշխատանքներ են տարվում օրենսգրքով կանոնակարգված հարաբերություններն իրականություն դարձնելու ուղղությամբ:

1.8 Մասնավորեցում, ղեական գույքի կառավարում, անճարժ գույքի շուկա

Կարելորելով պետության կարգավորիչ դերը ազատ տնտեսական հարաբերությունների ձեւավորման գործում՝ 2000-2004 թթ. կառավարությունն առաջնային է համարել մասնավորեցվող ձեռնարկության ճակատագիրը՝ հետագա գործունեության արդյունավետության առումով:

Արդյունքում, օտարերկրյա եւ տեղական ներդրումների հետեւողականորեն ներգրավման, տնտեսությունում մասնավոր սեփականության վրա հիմնված ընկերությունների թվի ավելացման շնորհիվ, 2000-2002 թթ. ՀՆԱ-ի կառուցվածքում մասնավոր հատվածի բաժինը մեծացել է շուրջ 3 տոկոսային կետով՝ ապահովելով ՀՆԱ-ի շուրջ 81.5%:

2004 թ. մասնավորեցման գործընթացի արդյունքներով կառավարության վերահսկման գործառույթում են գտնվում ներդրումային պարտավորություններ եւ սոցիալական երաշխիքներ սահմանող թվով 136 մասնավորեցման եւ օտարման պայմանագրեր:

Գույքային իրավունքների ճանաչման եւ գրանցման թափանցիկ համակարգի ձեւավորման ուղղությամբ իրականացվել է գրանցման գործառույթների պարզեցում, ժամկետների կրճատում, իրավունքների վերաբերյալ հավաստի տեղեկատվական բանկի ստեղծում, «Մեկ պատուհանի» սկզբունքի ներդրում, որը Կադաստրի պետական կոմիտեն արդեն իսկ 2003 թվականից սկսել է կիրառել իր աշխատանքում:


2002 թ. սկսված գույքային իրավունքների գրանցման ժամկետը՝ կախված գրանցվող օբյեկտի տեսակից, սահմանվել է 1-7 օր՝ 2001 թ. դրությամբ սահմանված 15-օրյա ժամկետի փոխարեն, ինչպես նաեւ կրճատվել է գրանցման ընթացակարգերի քանակը:

Վերջին տարիներին նկատվել է հանրապետությունում անշարժ գույքի հետ կապված գործարքների որակական եւ կառուցվածքային փոփոխություն, որի արդյունքում մարզերում բավականին աշխուժացել են անշարժ գույքի հետ կապված գործարքները: Մասնավորապես՝ 2004-ին անշարժ գույքի հետ կապված գործարքները մարզերում կազմել են շուրջ 60%, այն դեպքում, երբ 2002 թ. դրանք կազմում էին ընդամենը 40%:

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայում ֆինանսավորման կայուն եւ գործուն համակարգերի ձեւավորման եւ զարգացման ուղղությամբ

կառավարության քայլերն ուղղված են եղել հանրապետության հիպոթեկային վարկավորման շուկայի կայացմանը, որի նպատակով ընդունվել է «Հիպոթեկային վարկավորման շուկայի զարգացման հայեցակարգը»: Առաջիկայում հիպոթեկային վարկավորման բնագավառի իրավական կանոնակարգումը կշարունակվի մնալ կառավարության ուշադրության կենտրոնում՝ նպատակ հետապնդելով հատկապես մատչելի վարկային ռեսուրսներ ձեռավորել ցածր եւ միջին եկամուտ ունեցող խավի համար:

Հանրապետությունում 1999թ. ընթանում են գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքները: Այդ աշխատանքների շրջանակներում կադաստրային քարտեզագրում է իրականացվել հանրապետության բոլոր համայնքներում եւ ստեղծվել են թվային կադաստրային քարտեզներ: Առաջին պետական գրանցման աշխատանքներն էապես նպաստել են անշարժ գույքի շուկայի աշխուժացմանը: Մասնավորապես՝ գծապատկերից երեւում է, որ 1999-2000թթ. զգալի անկումից հետո անշարժ գույքի շուկայի գործարքների քանակն ունեցել է շարունակական աճ: Մասնավորապես՝ գործարքների թիվը 2000թ. 33233 գործարքի համեմատ աճելով շուրջ 3 անգամ, 2004թ. հասել է 98345-ի: Նախատեսվում է, որ 2005թ. այդ ցուցանիշը կհասնի շուրջ 120 հազարի: Գրանցման աշխատանքները նախատեսվում է ամբողջությամբ ավարտել 2006թ.:



Աղբյուրը՝ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի պետական կոմիտե

Ներկայում ընթանում են անշարժ գույքի գրանցման on-line համակարգի ներդրման աշխատանքները, որոնց ավարտից հետո հանրապետությունում կգործի իրական ժամանակում աշխատող գրանցման համակարգ, իսկ համակարգի արտաքին օգտագործողները հնարավորություն կունենան դրանից օգտվել հնտերնետի միջոցով:

1.9 Գործարար միջավայրի բարելավում, փոփոխություններ և միջին ձեռնարկատիրություն

2000-2004 թթ. գործարար միջավայրի զարգացման ուղղությամբ կառավարության գործունեության առանցքային ուղղություններից է եղել ներքին շուկայում տնտեսավարման մրցակցային դաշտի զարգացումը, ստվերային տնտեսության դեմ պայքարի գործուն մեխանիզմների մշակումն ու իրագործումը, հանրապետությունում տնտեսական մրցակցության կարգավորումը, անբարեխիղճ մրցակցության կանխումը:

Ըստ էության, կայացել է պետություն - մասնավոր հատված երկխոսությունը, որը գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավման կարևորագույն գրավականն է:

2000թ. ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծված Գործարարության աջակցության խորհուրդն իր կազմում միավորել է ինչպես կառավարության ներկայացուցիչներին, այնպես էլ հանրապետության տարբեր ոլորտներ ներկայացնող գործարարներին, այդ թվում՝ փոքր ու միջին ձեռնարկատիրության բնագավառի (այժմ ԳԱ-ում ներկայացված են 44 գործարարներ): 2000-2004թթ. ընթացքում հորիզոնի կողմից քննության են առնվել եւ լուծման համապատասխան ընթացք տրվել հանրապետությունում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված բազմաթիվ խնդիրների:

Նշված ժամանակաշրջանում էականորեն պարզեցվել է ընկերությունների գրանցման գործընթացը՝ նախատեսելով գրանցման պարզ ընթացակարգերի սահմանում եւ միասնական համակարգի ձեւավորում: Ներկայում այն հնարավորություն է տալիս ձեռնարկությունների գրանցման բոլոր փուլերն իրականացնել «մեկ «պատուհանից»:

Կառավարությունը կարևորել է կապիտալ ներդրումների ավելացումը եւ դրանց արդյունավետության բարձրացումը՝ առաջնային համարելով հատկապես մասնավոր ներդրումները: Այդ է վկայում տնտեսությունում կատարված ներդրումների մեջ մասնավոր ներդրումների ավելացումը, որի մասնաբաժինը ընդհանուր ներդրումներում 2000 թ. շուրջ 72%-ի համեմատ՝ 2004 թ. կազմել է շուրջ 81%:

Կառավարությունը հատուկ վերաբերմունք է ցուցաբերել փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը, որը հատկապես միջին խավի ձեւավորման հարցում ունի առանցքային նշանակություն:

Վերջին տարիներին փոքր ու միջին ձեռնարկատիրության աջակցությունը հանրապետությունում ստացել է համակարգված բնույթ: Տարեցտարի իրականություն է դառնում փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական օժանդակության ծավալների ավելացումը, որոնք նախատեսվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերով: 2003-2004 թթ. Երեւանում եւ հանրապետության այլ մարզերում գործող՝ տարեկան ավելի քան 4500 ՓՄՁ սուբյեկտներ հանդիսացել են նշված օժանդակության հասցեատեր: Այդ նպատակով 2004 թ. պետական բյուջեից փաստացի հատկացվել է 234 մլն դրամ:

Կարելորելով մարզերում փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության հասանելիությունն ու մատչելիությունը՝ 2003-2004 թթ. մայրաքաղաքում եւ հանրապետության 6 մարզերում արդեն իսկ գործում են ՓՄՁ տարածքային մասնաճյուղեր, իսկ 2005 թ. ընթացքում կսկսեն գործել չորս նոր մասնաճյուղեր՝ Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի եւ Վայոց Ձորի մարզերում:

ՓՄՁ ոլորտում վերջին 3 տարիների ընթացքում ստեղծվել են շուրջ 20 հազ. ՓՄՁ սուբյեկտներ, իսկ միայն 2004 թ. ընթացքում, ըստ նախնական գնահատականների, ստեղծվել են շուրջ 8500 նոր սուբյեկտներ՝ ապահովելով ավելի քան 21 հազար նոր աշխատատեղ: Հատկանշական է նաեւ, որ աջակցության 2004 թ. ծրագրային միջոցառումների ավելի քան 70% ուղղվել է մարզերի տարածաշրջաններում տնտեսական եւ գործարար ակտիվության բարձրացմանը:

ՓՄՁ գործունեության համար իրականացված քաղաքականությունների արդյունքում՝ 2004 թ. ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը կազմեց ՀՆԱ-ի 39%՝ գրեթե կրկնակի գերազանցելով 2000 թ. մակարդակը:

Առաջիկա տարիներին կառավարությունը կապահովի ՓՄՁ ոլորտի զարգացման եւ ընդլայնման ուղղությամբ աշխատանքները: ՓՄՁ պետական օժանդակության ծավալները միայն պետական բյուջեից 2005-2007 թթ. կկազմեն տարեկան առնվազն 300 մլն դրամ:

1.10 Ֆինանսական եւ բանկային համակարգ

Վերջին տարիներին հանրապետությունում նկատվում են միջազգային զարգացման չափանիշներին համապատասխան բանկային համակարգի զարգացման միտումներ: Կառավարության համար առավել կարեւոր է, որ նշված զարգացումները զուգակցվել են երկրի տնտեսության բանկային եւ իրական հատվածների փաստացի մերձեցմամբ:

Կարելորելով ֆինանսական եւ բանկային համակարգերի կայուն զարգացումը, որպես տնտեսական աճի տեմպերի արագացման հիմնական նախապայմաններից մեկը՝ ՀՀ կառավարության եւ Կենտրոնական բանկի միջեւ համագործակցության արդյունքում, բանկային գործունեության կարգավորման մեխանիզմների կատարելագործմամբ, ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման մեխանիզմների հստակեցմամբ որոշակի քայլեր են ձեռնարկվել բանկային համակարգի նկատմամբ բնակչության վստահության վերականգնման ուղղությամբ:

Բանկային համակարգի ինստիտուցիոնալ զարգացումն ապահովելու համար 2003 թ. հունվարի 1-ից սկսել է վարկային ռեգիստրը: 2000-2004 թթ. բանկային համակարգը շարունակել է ազատվել անմրցունակ բանկերից, եւ արդեն 2004 թ. հանրապետությունում գործել է 20 առեւտրային բանկ՝ 233 մասնաճյուղերով:

Հատկապես վերջին տարիներին սկսել են ակտիվորեն զարգանալ ոչ բանկային վարկային հաստատությունները: 2004 թ. տարեվերջի դրությամբ՝ հանրա-

պետության տարածքում գործում է 9 վարկային կազմակերպություն, այդ թվում՝ 1 վարկային միություն, 2 լիզինգային և 6 ունիվերսալ վարկային կազմակերպություն:

2005 թ. բանկային համակարգում ծրագրավորվում է աճ, որի զարգացմանը մեծապես կնպաստեն բանկերի նվազագույն կապիտալի նկատմամբ նոր նորմատիվային պահանջները, տնտեսության բիզնես միջավայրի զգալի բարելավումը և ավանդների ապահովագրման համակարգի վերջնական ներդրումը:

2. ՇԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

2.1 Բյուջետային համակարգ

2000-2004 թթ. մակրոտնտեսական զարգացումները նախադրյալներ ստեղծեցին հարկաբյուջետային քաղաքականության մեջ որակական փոփոխություններ մտցնելու համար: Պետական եկամուտների քաղաքականությունը զերծ է եղել հարկային բեռի ծանրացմանն ուղղված օրենսդրական փոփոխություններից, իսկ հարկային եկամուտների ավելացման գործում կարելուով է վարչարարության բարելավումը: Պետական բյուջեի եկամուտների ավելացմանը զուգընթաց, քայլեր են ձեռնարկվել պետական բյուջեի՝ հատկապես սոցիալական ոլորտի ծախսերն ավելացնելու, նախորդ տարիներին կուտակված ապառքները մարելու, պետական բյուջեի դեֆիցիտը կրճատելու ուղղությամբ:

2000 թ. սկիզբ դրվեց պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման աշխատանքներին, որոնք հիմնականում ուղղված էին պետական ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը:


Արդեն 2003 թ. միջնաժամկետ բյուջետավորման սկզբունքներում դրվեց նաև Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին ներդաշնակ բյուջետային ծրագրավորում իրականացնելու խնդիրը, և ներկայում միջնաժամկետ բյուջետավորումն իրականացվում է այդ սկզբունքի համաձայն:

2000-2004 թթ. պետական բյուջեի ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս հարկային եկամուտների և տուրքերի շարունակական աճը: 2000 թ. համեմատությամբ, երբ հարկային եկամուտները և տուրքերը կազմել էին 152.6 մլրդ դրամ, 2004 թ. դրանք կազմեցին 267.0 մլրդ դրամ՝ աճելով գրեթե 75.0%-ով:

Սկսած 2001 թ.՝ կառավարությունը ձեռնամուխ է եղել արդյունքների վրա հիմնված ծրագրային բյուջետավորման գործընթացին անցում կատարելու նախապատրաստական աշխատանքներին: Արդյունքում՝ 2002, 2003 և 2004 թթ. պետական բյուջեների նախագծերի կազմում ներառվել են սոցիալական

ուլորտներում (կրթություն, առողջապահություն եւ սոցիալական ապահովություն) այդ տարիների պետական բյուջեների միջոցների հաշվին իրականացվելիք ծախսային ծրագրերից ակնկալվող արդյունքների ցուցանիշները:

Բյուջեի կատարման կարգապահության բարձրացման արդյունքում, սկսած 2002 թվականից, հնարավոր դարձավ ոչ միայն չկուտակել նոր ծախսային ապառքներ, այլև ամբողջությամբ մարել նախորդ տարիներին կուտակվածները: Դա ուղեկցվել է այս տարիների ընթացքում սոցիալական ոլորտներին ծախսային հատկացումների ավելացմամբ: 2004 թ., մակրոտնտեսական բարենպաստ միջավայրի պայմաններում, նախորդ տարիների դրական միտումները շարունակվեցին, մասնավորապես՝ ավելացավ սոցիալական ոլորտների ֆինանսավորումը: Այսպես օրինակ, 2003-2004 թթ. համեմատ, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովություն եւ սոցիալական ապահովագրության ոլորտներ ուղղված միջոցներն ավելացել են՝ համապատասխանաբար 21.0%, 27.5%, 24.5%:



Աղբյուրը՝ ԳԳ ազգային վիճակագրական ծառայություն, ԳԳ ֆինանսների եւ Էկոնոմիկայի նախարարություն

2005-2007 թթ. պետական բյուջեի լրացուցիչ մուտքերն ուղղվելու են հիմնականում կրթության ու գիտության, առողջապահության, սոցիալական ապահովություն եւ սոցիալական ապահովագրության ոլորտներ, ինչպես նաեւ գերակա ուղղություններ համարվող տնտեսության առանձին ճյուղեր:

Առաջիկա տարիներին պետական բյուջեի դեֆիցիտը աստիճանաբար կը նվազի՝ մինչև 2007թ. կազմելով 2.0%: Միջին ժամկետ հատվածում դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքում կավելանա ֆինանսավորման ներքին աղբյուրների տեսակարար կշիռը՝ հիմնականում ի հաշիվ պետական պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված մուտքերի:

2.2 Գարկային եւ մաքսային հաճակարգ

2000-2004 թթ. Հայաստանի Հանրապետությունում իրականացված հարկային քաղաքականությունը բնորոշվել է հարկային բեռի նվազեցմամբ, որը նպատակաուղղված է եղել ներդրումների ու ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտների վերացմանը, տնտեսական աճին նպաստող միջավայրի ապահովմանը, ինչպես նաև հարկային համակարգի եւ հարկային վարչարարության կատարելագործմանը եւ դրա արդյունքում՝ պետական բյուջեի հարկային եկամուտների կայունության ապահովմանը:

Ալցիգային հարկով հարկման հարաբերություններում կարելու էր 2000 թ. նոր օրենքի ընդունումը, որով բոլոր ապրանքների համար ալցիգային հարկի դրույքաչափերը հաստատագրվեցին, եւ կրճատվեց այդ հարկատեսակով հարկման ենթակա ապրանքների ցանկը:

Ձեռնարկատիրության խթանման ու ստվերի կրճատմանը նպաստել են այդ ժամանակահատվածում եկամտահարկի եւ շահութահարկի գծով կատարված բարեփոխումները: 2001 թ. հունվարի 1-ից նվազեցվեց շահութահարկի առավելագույն չափը: Նախկինում սահմանված 25% սահմանային դրույքաչափի փոխարեն 2001 թ. սահմանվեց շահութահարկի միասնական 20 % դրույքաչափ: Եկամտահարկով չհարկվող շեմը 2001 թ. սահմանվեց 20 հազ. դրամ (մինչ այդ՝ 8 հազ. դրամ): Եկամտահարկի դրույքաչափերը նվազեցվել են. 2001 թ. եկամտահարկի առավելագույն 30% դրույքաչափի փոխարեն սահմանվել է 20% դրույքաչափ:

2004 թ. սկսած հողի հարկի եւ գույքահարկի հավաքագրման իրավասությունը հարկային մարմիններից աստիճանաբար վերապահվեց տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ուղղված վերջինների ֆինանսական անկախության ամրապնդմանը եւ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ձեւավորման ինքնուրույնության ապահովմանը:

Հարկային վարչարարության ուժեղացման շրջանակներում, 2004թ. հունվարի 1-ից եապես կրճատվեց ներմուծման ժամանակ մաքսային սահմանին ավելացված արժեքի հարկով չհարկվող ապրանքների ցանկը:

Իրականացվող մաքսային քաղաքականության շրջանակներում 2001 թ. ի վեր, մաքսային օրենսդրությամբ մի շարք կարեւորագույն հիմնահարցեր են լուծվել: Հստակեցվել են մաքսային արժեքի որոշման կարգը, ապրանքների ծագման երկրի որոշման կանոնները, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության գործում մաքսային մարմինների գործառույթները կանոնակարգող նորմերը, մաքսային գործը կանոնակարգող բոլոր հիմնական ընթացակարգերն ու հիմնահարցերը:

Գործող հարկային օրենքների համախմբման, հարկային օրենսդրության կատարելագործման նպատակով 2004 թ. մշակվեց Հայաստանի Հանրապետության միասնական հարկային օրենսգրքի ընդհանուր մասի նախագիծը, որը հասարակական լայն քննարկումների կներկայացվի արդեն այս տարվա ընթացքում:

Առաջիկա երեք տարիներին հարկային քաղաքականությունը կբնութագրվի հարկման մեխանիզմների կատարելագործմամբ, արտոնությունների առա-

վելագույն կրճատմամբ, ինչպես նաև առանձին ոլորտների, գործունեության առանձին տեսակների, առանձին ձեռնարկությունների համար հարկային արտոնությունների բացառմամբ:

Կբարձրացվի հարկային և մաքսային վարչարարության արդյունավետությունը: Կուժեղացվեն հակաօրինական գործունեության և ստվերային տնտեսական գործարքների բացահայտման միջոցառումները՝ թույլ չտալով հարկերի վճարումից խուսափում և տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ ապահովելով արդարացի ու հավասար վերաբերմունքի մթնոլորտ: Դրանով հանդերձ, բոլոր տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ կապահովվեն հարկման հավասար, արդար և ազնիվ մոտեցումներ:

2.3 Ծախսերի արդյունավետություն

2000-2003 թթ. հնարավոր դարձավ պետության և համայնքների կարիքների համար տնտեսապես շահավետ, միասնական կանոններով և թափանցիկ ու հրապարակային գնումների գործի կազմակերպման նպատակով ներդնել գնումների համակարգը: Վերջինիս առնչվող տեղեկատվության մատչելիության բարձրացման համար գնումների վերաբերյալ բոլոր տեղեկությունները տեղադրվեցին Ինտերնետ համակարգային ցանցում:

2000 թ. հունիսի 1-ից ներդրվեց բյուջեների կատարման միասնական դրամարկղի սկզբունքը, որով ապահովվել է Հայաստանի պետական և համայնքների բոլոր (ներառյալ՝ արտաբյուջետային) դրամական միջոցների շրջանառումը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության գանձապետական միասնական հաշվով:

Պետական և համայնքների բյուջեների կատարման գործընթացը կանոնակարգելու նպատակով, ընդունվել է նաև «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքը, որի կիրարկման շրջանակներում բարձրացվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը՝ վերջիններիս ամրագրված ակտիվների (նաև՝ դրամական միջոցների) կառավարման բնագավառում:

Արդյունքում, 2000-2004 թթ. ընթացիկ ծախսերը կատարվել են ոչ միայն օրենքով սահմանված ժամկետներում, այլև մարվել են 2000 թ. սկզբի դրությամբ եղած ավելի քան 44 մլրդ դրամ ապառքները: Ընդ որում, 2002 թ. մարվել էր շուրջ 30 մլրդ դրամի ծախսային ապառք՝ առողջապահության ոլորտում ավելի քան 13.8 մլրդ, կրթության ոլորտում՝ ավելի քան 2.2 մլրդ, համայնքներին դրտացիաների գծով՝ ավելի քան 3.9 մլրդ, ընտանեկան նպաստների գծով՝ ավելի քան 3.7 մլրդ դրամ:

2003թ. սկսած՝ նախաձեռնվել են ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումները:

Առաջիկայում կավտոմատացվեն գանձապետական համակարգի կողմից իրականացվող գործառույթները, իսկ պետական մարմինների ու գանձապե-

տական համակարգի միջեւ կիսատատվի էլեկտրոնային կապ, եւ վերոհիշյալ գործարքները կիրականացվեն էլեկտրոնային եղանակով:

Նախատեսվում է նաեւ ներդնել էլեկտրոնային գնումների համակարգը, որի համար նախատեսվում է տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի մշակում եւ ձեւավորում:

2.4 Պետական դարձ

Արտաքին դեպարտմենտի դարձ

2000-2004 թթ. արտաքին պետական պարտքի կառավարման ոլորտում քաղաքականությունն ուղղված է եղել արտոնյալ պայմաններով վարկերի ստացմանը եւ ոչ արտոնյալ վարկերի վաղաժամկետ մարմանը: «2003-2004 թթ. ընթացքում մարվել է 144.6 մլն ԱՄՆ դոլար պարտք, որից 103 մլն ԱՄՆ դոլարը Ռուսաստանի Դաշնության եւ Թուրքմենստանի նկատմամբ, վերջիններս հանդիսանում էին ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված միջոցներ:

Նախորդ չորս տարիների` միջինում 42%-ի դիմաց 2004 թ. արտաքին պետական պարտքը 2004 թ. կազմել է ՀՆԱ-ի 33%: Միաժամանակ, ՀՆԱ-ի նկատմամբ արտաքին պարտքի գույտ ներկա արժեքի հարաբերությունը 2004 թ. կազմեց շուրջ 20%, ինչի արդյունքում` Հայաստանը շարունակում է համարվել որպես նվազ պարտքային բեռ ունեցող պետություն:

2005-2007թթ. ծրագրավորվում է պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը իրականացնել բացառապես արտաքին արտոնյալ աղբյուրների հաշվին, որը նշանակում է, որ վերցրած նոր պարտքի տոկոսադրույքը չպետք է գերազանցի առկա պարտքի փաստացի միջին տոկոսադրույքը:

Ներքին դեպարտմենտի դարձ

2000-2004 թթ. Եապես բարձրացել է ներքին պետական պարտքի կառավարման արդյունավետությունը: Այս ժամանակահատվածում կառավարությանը հաջողվել է բարելավել ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները, սպասարկման ծախսերի գծով, ապահովել զգալի խնայողություններ: Մեծացել է մարման ցրվածությունը` այն տարածելով մինչեւ 2014 թ., իսկ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է:

Նվազեցվել է պետական կարծաժամկետ պարտատոմսերի տեսակարար կշիռը շրջանառությունում` ի հաշիվ միջին եւ երկարաժամկետ պարտատոմսերի թողարկման ծավալների ավելացման: Մասնավորապես` 2004թ., կարճաժամկետ պարտատոմսերի տեսակարար կշիռը շրջանառությունում կազմել է մոտ 20%` 2000 թ. 55%-ի դիմաց:

Այս ամենի արդյունքում՝ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ժամկետայնությունը 2004թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ, կազմել է 754 օր, եկամտաբերությունը՝ 9%:

ԱՂՅՈՒՄԱԿ. Շրջանառության մեջ գտնվող պետական պարտքի ժամկետայնությունը եւ եկամտաբերությունը		
	Շրջանառության մեջ գտնվող ՊՊ ժամկետ. (օր)	Շրջանառության մեջ գտնվող ՊՊ եկամտ.
2000	152	24.52%
2001	209	20.05%
2002	263	16.43%
2003	353	13.72%
2004	754	9.01%

Աղբյուրը՝ 73 ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն

2005-2007 թթ. համար ծրագրվող քաղաքականությունը հնարավորություն կտա առնվազն կայուն պահել ներքին պարտքի տոկոսադրույքները եւ նվազեցնել պետական բյուջեի ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցների ներգրավման հետ կապված ռիսկերը:

2.5 Միջազգային ֆինանսական համագործակցություն

Վերջին տարիների ընթացքում Հայաստանի կառավարությունը բավականին արդյունավետ համագործակցում է միջազգային ֆինանսական կառույցների, մասնավորապես՝ Արժույթի միջազգային հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի հետ: Իրականացվող ծրագրերը բազմաթիվ են եւ չեն կարող ամփոփվել մի քանի կետերով: Այնուամենայնիվ, անդրադառնանք դրանցից մի քանիսին.

2001 թ. մայիսի 23-ին Արժույթի միջազգային հիմնադրամի տնօրենների խորհուրդը հաստատեց Հայաստանին՝ Արժատության նվազեցման եւ տնտեսական աճին օժանդակության (PRGF) ծրագրերը: Ծրագրի արդյունավետ իրականացման արդյունքում 2001-2004 թթ. Հայաստանին տրամադրվեց 69 մլն SDR-ին համարժեք ԱՄՆ դոլար:

2004 թ. հունիսի 10-ին Համաշխարհային բանկի տնօրենների խորհրդի կողմից քննարկվեց եւ հաստատվեց «Երկրի օժանդակության ռազմավարությունը»,

որով առաջիկա չորս տարիներին Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն կունենա օգտվել մոտ 170-220 մլն ԱՄՆ դոլարի վարկավորումից: Կարելու է հաշվի առնել, որ ՀԲ-ի նախորդ՝ «Երկրի օժանդակության ռազմավարության» իրականացման արդյունքում Հայաստանի արձանագրած տնտեսական ցուցանիշները, իրականացրած հավասարակշռված մակրոտնտեսական քաղաքականությունը եւ անհրաժեշտ տնտեսական բարեփոխումների շարունակականությունը հնարավոր դարձրին Հայաստանը ճանաչել լավագույն սցենարի շրջանակներում վարկավորվող երկիր եւ մեծացնել Հայաստանի վարկավորման հնարավորությունները:

2004 թ. ընթացքում սկսվեցին «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի հայաստանյան ծրագրի մշակման գործընթացի համակարգման աշխատանքները: Կառավարության կողմից ստացվել եւ ամփոփվել են շահագրգիռ կողմերի 200-ից ավելի առաջարկություններ, որոնք հիմք են դարձել ներկայում ընթացքի մեջ գտնվող՝ «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի հայաստանյան ծրագրի մշակման համար: Նշված քննարկումների ընթացքում ձեւավորվել են ծրագրային գերակայությունների վերաբերյալ հստակ մոտեցումներ: Ծրագրային գերակայությունների առանցքը հանդիսանում են գյուղական ենթակառուցվածքները, հատկապես՝ ոռոգման համակարգը եւ համայնքային նշանակության ճանապարհները:

2004թ. ապրիլին ստորագրվեց «ԳԴՀ կառավարության եւ ՀՀ կառավարության միջեւ ֆինանսական համագործակցության մասին Կովկասյան նախաձեռնության շրջանակներում» համաձայնագիրը, որով Հայաստանին է տրամադրվելու 4.7 մլն եվրո վարկ՝ «Հայաստանի եւ Վրաստանի միջեւ էլեկտրաէներգիայի հաղորդման տարածաշրջանային համակարգ» (Ալավերդի-2) ծրագրի իրականացման համար:

2004թ. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) եւ ՀՀ միջեւ նախաստորագրվեց Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի փոխառության համաձայնագիրը (15.3 մլն ԱՄՆ դոլար վարկ), որի նպատակն է Հայաստանի առավել աղքատ 7 լեռնային մարզերի (Տավուշ, Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Վայոց Ձոր, Արագածոտն եւ Սյունիք) գյուղական բնակչության եկամուտների կայուն աճի ապահովումը:

3. ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

3.1 Զրային սնտեսություն

Վերջին հինգ տարիների ընթացքում ջրային տնտեսության համակարգում բարեփոխումների հիմնական նպատակը եղել է սպառողներին հասանելի, մատչելի եւ որակյալ ջրամատակարարմամբ ապահովելը:

Բարեփոխումներն իրականացվել են երեք հիմնական ուղղություններով՝ համակարգի ֆիզիկական կառուցվածքի վերականգնում եւ զարգացում, սուբսիդավորման եւ սակագնային քաղաքականությունների բարելավում եւ համակարգի հաշվառելիության աստիճանի բարելավում:

Զրային տնտեսության համակարգի ֆիզիկական կառուցվածքի վերականգնման նպատակով վերջին հինգ տարիների ընթացքում իրականացվել են մի շարք ներդրումային ծրագրեր, որոնք պետական ներդրումային քաղաքականության կարելուր ուղղություններից են հանդիսացել:

2000-2007 թթ. ընթացքում պետական բյուջեի հաշվին ջրային տնտեսության համակարգում կատարված ներդրումները									
	2000	2001	2002	2003	2004*	2005	2006	2007	
խմելու ջրի համակարգում ներդրումներ մլն դրամ,	2366	150	636	6857	9574	19584	5951	2760	2684
ոռոգման համակարգում ներդրումներ մլն դրամ,	1915	1341	4516	3810	4722	16305	3730	11865	9155
ԸՆԴԱՄԵՆԸ	4282	1492	5153	10667	14296	35889	9681	14625	11839

Աղբյուրը՝ ԳԳ պետական բյուջեի հաշվետվություններ

*) 2004 թվականի համար բերված են ծրագրային ցուցանիշներ

2000-2004 թթ. իրականացված գրեթե 36 մլրդ. դրամի պետական ներդրումային ծրագրերի շնորհիվ հնարավոր է եղել բարձրացնել խմելու ջրի մատչելիության աստիճանը՝ 2003 թ. քաղաքային բնակավայրերում կենտրոնացված ջրամատակարարումը հասանելի է եղել բնակչության շուրջ 97.7%-ին, իսկ գյուղական բնակավայրերում՝ 71.3%-ին:

Հաջողություններ են արձանագրվել նաեւ սուբսիդավորման եւ սակազնային քաղաքականության կատարելագործման ուղղությամբ: Այս բնագավառում աստիճանաբար կրճատվում են համակարգի ընկերությունների տրամադրվող սուբսիդիաների ծավալները՝ ազատված միջոցներն ուղղելով առավել հասցեական սոցիալական ծրագրերի իրականացմանը: Մատուցվող ծառայությունների սակագները աստիճանաբար համապատասխանեցվում են ծառայությունների մատուցման շահագործման ծախսերին:

Այսպես, եթե 2000 թ. համակարգի ընկերությունների տարեկան ֆինանսական ճեղքվածքը կազմում էր մոտ 12 մլրդ. դրամ, որը, ըստ ելույթան, ամբողջությամբ ֆինանսավորվում էր պետական բյուջեի հաշվին (սուբսիդիա, բյուջետային վարկ եւ այլն), ապա 2004 թ. այն գրեթե 1.5 անգամ կրճատվել է եւ կազմել մոտ 8 մլրդ դրամ:

Շոշափելի առաջընթաց է արձանագրվել նաեւ համակարգում ջրի հաշվառման ուղղությամբ, հատկապես խմելու ջրի համակարգում, ինչը հնարավորություն կտա առավել հիմնավորված սակագնային քաղաքականություն իրականացնել:

Բավական է նշել, որ 2005թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում խմելու ջրից օգտվող բաժանորդների ընդհանուր թվի շուրջ 59,0%-ը, իսկ ակտիվ բաժանորդների մոտավորապես 80,0%-ը ջրաչափեր են տեղադրել:

Առաջիկա տարիներին նախատեսվում է ապահովել խմելու եւ ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը եւ արդյունավետությունը, ինչպես նաեւ կրճատել ջրի կորուստները եւ բարելավել ջրամատակարարման եւ ջրահեռացման ծառայությունների որակը:

3.2 Ծանադարհային ճնշումներ

Համայնքների ֆիզիկական մեկուսացվածության խնդիրը պայմանավորված է ոչ միայն եւ ոչ այնքան մարզկենտրոնից եւ մայրաքաղաքից ունեցած հեռավորությամբ, այլ առավելապես այդ հեռավորությունները կապող ճանապարհների անմխիթար վիճակով, իսկ առանձին դեպքերում՝ նաեւ որոշ հատվածների իսպառ բացակայությամբ:

Այդ կապակցությամբ վերջին տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ֆիզիկական ենթակառուցվածքների ոլորտում իրականացվող քաղաքականության կարելուրագույն առաջնահերթություն սահմանեց Հայաստանի ճանապարհային ցանցի վերականգնումը եւ զարգացումը, ինչն արտացոլվեց պետական ծախսային քաղաքականության մեջ:

Մասնավորապես՝ վերջին հինգ տարիների ընթացքում էականորեն ավելացել են պետական բյուջեից ճանապարհային ցանցի ֆինանսավորման ծավալները, ինչը վկայում են աղյուսակում բերված տվյալները:

2000-2007 թթ. պետական բյուջեի ծախսերը ճանապարհային տնտեսությունում									
	2000	2001	2002	2003	2004*	2000-2004	2005	2006	2007
Պետական բյուջեից ճանապարհային ցանցի ֆինանսավորումը (մլն դրամ)	1714	4848	6805	27139	17394	57901	5869	5164	5164

Աղբյուրը՝ 33 պետական բյուջեի հաշվետվություններ
*) 2004 թվականի համար բերված են ծրագրային ցուցանիշներ

2000-2004 թթ. ընթացքում պետական բյուջեի հաշվին ճանապարհային տնտեսությունում իրականացվել են գրեթե 58 մլրդ դրամի աշխատանքներ: Այս առումով պետք է հատկապես նշել Լինսի հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացված ծրագրերի կարելությունը, միայն 2003 թ. ընթացքում վերջինիս օժանդակությամբ ճանապարհային տնտեսությունում իրականացվել են շուրջ 21 մլրդ դրամի ներդրումային ծրագրեր:

Առանձնահատուկ է նաեւ այն, որ սկսած 2004 թվականից պետական բյուջեից ֆինանսավորում է նախատեսվել նաեւ համայնքային/տեղական նշանակության ճանապարհների վերականգնման համար:

Առաջիկա տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակելու է ճանապարհային տնտեսության ֆինանսավորման ծավալների ավելացման քաղաքականությունը, նպատակ դնելով ճանապարհային ցանցի ընթացիկ պահպանման ծախսերը ֆինանսավորել պետական բյուջեի ներքին ռեսուրսների՝ հատկապես ճանապարհներից օգտվողների գանձումների (ճանապարհային ցանց մուտք գործելու տարեկան վճարների, միջազգային տարանցման համար գանձումների, վառելիքի համար գանձվող հարկերից մասհանումների) հաշվին:

2005-2007թթ. ժամանակահատվածում նախատեսվում է վերականգնել 881.5 կմ ճանապարհահատվածներ:

3.3 Էներգետիկ համակարգ

Էներգետիկ ոլորտում վերջին տարիներին կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է եղել էներգահամակարգի հուսալիության բարձրացմանը, սեփական էներգառեսուրսների առավելագույն օգտագործմանը եւ համակարգի ֆինանսատնտեսական գործունեության հավասարակշռությանը:

Հատկապես կարելիվում է Էլենկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի մասնավորեցումը, ինչպես նաեւ 2003 թ. ընդունված՝ համակարգի ընկերությունների ֆինանսական առողջացման ծրագրի իրականացումը: Իրականացվում է ոլորտում պետության մասնակցության կրճատում՝ ապահովելով այնպիսի կարգավորող դաշտ, որի պայմաններում մասնավոր ներդրողները կարող են լավագույնս բարձրացնել ծառայությունների հուսալիությունը եւ որակը:

Վերջին տարիներին լայն թափով իրականացվել են Հայաստանի Հանրապետության տարածքի գազաֆիկացման աշխատանքներ, որոնք արդյունքում 2004 թ. վերջին հնարավոր է եղել գազաֆիկացված բնակավայրերի բաժանորդների թիվը հասցնել շուրջ 257 հազարի: Այս ոլորտում առաջիկայում քաղաքականությունը ուղղված է լինելու բաժանորդների թվաքանակի շարունակական ավելացմանը՝ նպատակ դնելով 2008 թվականից ունենալ նախկինում Հայաստանի տարածքում գազաֆիկացում ունեցող բաժանորդների թվաքանակից ավելի շատ բաժանորդներ:

3.4 **Գյուղական ենթակառուցվածքներ**

Գյուղական ենթակառուցվածքների բարելավումը կառավարությունը դիտարկում է որպես գյուղական աղքատության մեղմացման հիմնական տարր: Ոռոգման համակարգի զարգացումը եւ համայնքային ճանապարհների բարելավումը շարունակելու են մնալ կառավարության վարած քաղաքականության առաջնահերթությունները՝ նաեւ առաջիկա տարիներին:

Կառավարությունն աշխատանքներ է իրականացրել գյուղատնտեսական ռիսկերի նվազեցման եւ բնական աղետների հետեւանքների մեղմացման ուղղությամբ: Այդ առումով կարելի է հակակարկտային ծառայության վերականգնումը, որի ուղղությամբ լուրջ աշխատանքներ են կատարվել, եւ այսօր Արագածոտնի մարզում տեղադրված են 15 հակակարկտային տեղակայանքներ:

2004 թ. հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի նորացման եւ համալրման նպատակով շարունակվել են նոր տեխնիկայի ձեռքբերման աշխատանքները: Մասնավորապես, ճապոնական դրամաշնորհի հաշվին 2005թ. ներկրվել է 2550 տոննա ազոտական պարարտանյութ, 39 միավոր տրակտոր՝ գյուղատնտեսական գործիքների հետ միասին: Բացի այդ, 2004թ. ՉԺՀ կառավարության անհատույց նվիրատվության հաշվին հանրապետություն է ներկրվել 51 միավոր տրակտոր եւ գյուղատնտեսական գործիքներ ու պահեստամասեր, որոնք աճուրդային կարգով իրացվել են գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողներին:

Առաջիկա տարիներին կշարունակվի վերոնշյալ քաղաքականությունների ուղղությամբ աշխատանքների իրականացումը, եւ հատկապես աշխատանքներ կիրականացվեն գյուղատնտեսական ռիսկերի նվազեցման ուղղությամբ աշխատանքները՝ սերմնաբուծության եւ տոհմային գործի բարելավման, անասնաբուժական հակահամաճարակային եւ բույսերի պաշտպանության կենտրոնացված միջոցառումների իրականացման միջոցով:

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

4.1 Կրթություն


Կրթական համակարգի պահպանումն ու հետագա զարգացումը կառավարությունը դիտում է որպես միջազգային ասպարեզում երկրի մրցունակությունն ապահովելու հիմնական գրավականներից մեկը: Խնդրի իրագործումն ապահովվել է համակարգի աստիճանական բարեփոխման միջոցով:

2000-2004 թթ. աշխատանքներ են տարվել կրթական համակարգի տարբեր մակարդակների կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կազմակերպահրավական տեսակների հստակեցման, համակարգի կառավարման ձեւի եւ ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ: Իրականացվել է ոլորտի կառավարման ապակենտրոնացում եւ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի ներդրում:

Այդ տարիներին մշակվել եւ սկսել է իրականացվել դպրոցների օպտիմալացման ծրագիրը, որի արդյունքում զգալի բարձրացել է ոլորտին ուղղվող պետական ծախսերի արդյունավետությունը՝ ապահովելով դպրոցական կրթության որակի եւ մատչելիության բարելավում: Հատկապես վերջին երկու տարիների ընթացքում միջոցներ են հատկացվել դպրոցների շենքային պայմանների բարելավմանն ու ջեռուցման խնդիրների լուծմանը՝ նպատակ ունենալով հնարավորինս ապահովել կրթական գործընթացի անընդհատությունն ու հաճախելիության բարձրացումը: Մասնավորապես՝ 2004 թ. ավարտվել են շուրջ 200 դպրոցների հիմնանորոգման, վերանորոգման եւ նոր դպրոցների կառուցման աշխատանքներ: 2003 թ. ավելացվել են ջեռուցման նպատակով տրվող վառելիքի չափը եւ ջեռուցման սեզոնի տևողությունը՝ տարբերակված ըստ հարթավայրային, լեռնային եւ բարձրլեռնային բնակավայրերում գտնվող դպրոցների:

Հանրակրթության ոլորտում որակյալ կադրերի հոսունության կրճատման, կրթության համապատասխան որակի ապահովման, ինչպես նաեւ ուսուցիչների սոցիալական վիճակի բարելավման նպատակով էականորեն բարձրացել է ուսուցիչների միջին աշխատավարձը: Եթե 2000 թ. ուսուցիչների միջին աշխատավարձը կազմել է 12.6 հազ. դրամ, ապա 2003 թ. այն կազմել է 18.6 հազ. դրամ, իսկ արդեն 2004 թ.՝ 30.6 հազ. դրամ: Ուսուցիչների աշխատավարձի բարձրացման քաղաքականությունը շարունակվում է նաեւ 2005 թ.՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ից ուսուցիչների միջին աշխատավարձը արդեն իսկ գերազանցեց 50 հազ. դրամի սահմանագիծը: Եապես բարձրացվել է նաեւ պետական ուսումնական հաստատությունների վարչական աշխատողների աշխատավարձը:

Ուսուցիչների միջին ամսական աշխատավարձը (հազ. դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

Կրթության որակի բարձրացման և համապատասխանության ապահովման տեսանկյունից հատուկ ուշադրություն է դարձվում ուսուցիչների վերապատրաստմանն ու դպրոցների ուսումնամեթոդական ու նյութատեխնիկական հիմքի բարելավմանը: Միայն 2004թ. կրթության որակի բարձրացման համար վերապատրաստման դասընթացներ են անցել 10405 ուսուցիչներ:


Հաջողվել է առաջին դասարանների աշակերտներին անվճար ապահովել դասագրքերով, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված գրքերով: «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արդեն 2003 թ. անվճար դասագրքերով ապահովվել են տարրական ընդհանուր կրթական ծրագրերով սովորող բոլոր երեխաները:

Արդեն 2004 թ. հնարավոր դարձավ հանրակրթության ոլորտում իրականացնել մեծ ծավալի շինվերանորոգման աշխատանքներ: Պետական բյուջեի միջոցներով կառուցվել է 25 նոր դպրոց և հիմնանորոգվել՝ 187-ը: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի համաֆինանսավորվող ծրագրերով կառուցվել է 16 դպրոցական շենք և հիմնանորոգվել՝ 148-ը:

2005-2007թթ. ժամանակահատվածում կտարվեն համապատասխան աշխատանքներ՝ լիովին ապահովելով հանրակրթական համակարգի բարեփոխումների և ռացիոնալացման իրականացումը բոլոր երեք մակարդակներով (համապետական, տարածքային և ներդպրոցական):

Ուսուցիչների միջին ամսական աշխատավարձը 2006-2007 թթ. կբարձրանա համապատասխանաբար՝ 16.4%-ով և 9,2%-ով, հասցվելով 58.8 հազար դրամի և 64.2 հազար դրամի: 2007թ. մեկ աշակերտի հաշվով ծախսերը 2004թ. համապատասխան ցուցանիշի համեմատ կաճեն 46%-ով: 2005-2007թթ. նույն տոկոսաչափով կբարձրացվի նաև վարչական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը:

2005-2007թթ. կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2005 թ. կկազմեն ՀՆԱ-ի 2.81%-ը, 2006 թ.՝ 2.80 %-ը, իսկ 2007 թ.՝ 2.92%-ը:



Աղբյուրը՝ 33 ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

Կրթության ոլորտի պետական ծախսերի ավելացումները գրեթե ամբողջությամբ ուղղվելու են հանրակրթության ոլորտ: Այս ոլորտում պետական ծախսերի ծրագրվող աճը կհանգեցնի՝ մեկ աշակերտի հաշվով կատարվող ծախսերի զգալի ավելացման: 2007թ. մեկ աշակերտի հաշվով ծախսերը, 2004թ. համապատասխան ցուցանիշի համեմատ, կաճեն 60.7%-ով:

4.2 Առողջապահություն

Բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության որակի ապահովման ու բարելավման հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ այս տարիներին սկսել են կիրառվել սկզբունքային նոր մոտեցումներ:


Բուժհաստատություններում իրականացվել են վերանորոգման ու վերազինման աշխատանքներ, և արդեն 2004 թվականին համակարգի բուժհաստատությունների շուրջ 80%-ում իրականացվել են վերանորոգման ու վերազինման աշխատանքներ:

Բնակչության առողջության առաջնային պահպանման մակարդակի հզորացման նպատակով հանրապետությունում իրականացվում է ընտանեկան բժշկության համընթաց ներդրում և այստեղ ուղղվող ռեսուրսների տոկոսային հարաբերության աստիճանական մեծացում: Մինչ այժմ կրթվել և վերապատրաստվել են 450-ից ավելի ընտանեկան բժիշկներ և բուժքույրեր:

Առաջնային բուժօգնության համակարգի դերի և նշանակության բարձրացումն արտացոլվել է պետական բյուջեում: 2004 թ. պետական բյուջեից այս

բնագավառին հատկացվող միջոցները կազմել են ավելի քան 8.7 մլրդ դրամ՝ 2.2 մլրդ դրամով գերազանցելով 2003 թ. մակարդակը: Ավելացել է ամբուլատոր-պոլիկլինիկական մեկ հաճախման գինը եւ դարձել է 900 դրամ՝ 2003 թ. 450 դրամի դիմաց, իսկ մեկ հիվանդի մեկ օրվա բուժման ծախսը 2004 թ. դարձել է 8300 դրամ՝ 2003 թ. 7300 դրամի դիմաց: 2005 թ. առողջապահության ոլորտում ֆինանսավորումը եւս աճել է, եւ 2004 թ. մակարդակը կգերազանցի ավելի քան 28%-ով:

Առողջապահության ֆինանսավորման նպատակային քաղաքականության իրականացման արդյունքում բարձրացել է հիվանդների դիմելիությունը: Այսպես, սկսած 2002 թվականից, հիվանդանոցներ ընդունված հիվանդների թիվն աճել է (100 բնակչի հաշվով՝ 2001 թ.՝ 4.9, 2002 թ.՝ 6.1, 2003 թ.՝ 6., 2004 թ.՝ 6.9 դիմելիություն (նախնական), աճել է նաեւ ամբուլատոր-պոլիկլինիկական հաճախումների թիվը՝ (միջինը մեկ բնակչի հաշվով կազմել է՝ 2001 թ.՝ 1.8, 2002 թ.՝ 1.9, 2003 թ.՝ 2.0, 2004 թ.՝ 2.1 դիմելիություն (նախնական):




Աղբյուրը՝ 33 առողջապահության նախարարություն

2005-2007թթ. Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի ֆինանսավորման միջին ժամկետ ծրագրի համատեքստում առողջապահության ոլորտի կառուցող ուղղություն է շարունակվելու դիտվել առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա:

4.3 Սոցիալական ադահովություն եւ ադահովագրություն

1999-2004 թթ. Նպաստներ ստանալու պայմանների աստիճանաբար խստացումը հանգեցրեց ընտանեկան նպաստներին ուղղվող ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության էական բարձրացման. 1999 թ.՝ 21.1 մլրդ. դրամ եւ 230 հազ. ընտանիք, 2003 թ.՝ 12.4 մլրդ. դրամ եւ 139 հազ. ընտանիք, 2004 թ.՝ 16.1 մլրդ. դրամ եւ 134 հազ. ընտանիք:



Աղբյուրը՝ 33 աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

Աղքատության ընտանեկան նպաստի կատարելագործման աշխատանքներն իրականացվում են հատկացված ֆինանսական միջոցներն առավելապես անչափահասներին տրամադրելու ուղղությամբ:

Ընտանեկան նպաստների ավելացումն ավելի ընդգծված էր 2004 թ.: Նախ՝ բազային նպաստի չափը 2003 թ. 4000 դրամի փոխարեն սահմանվեց 4500 դրամ: Անչափահաս յուրաքանչյուր երեխայի համար նպաստի հավելավճարը սահմանվեց 2500 դրամ՝ անապահովության ավելի ցածր աստիճանով ընտանիքների համար (35-38 բալ միջակայքում գտնվող ընտանիքների համար) եւ 3000 դրամ՝ ավելի անապահով ընտանիքների համար (38-ից բարձր բալ ունեցող ընտանիքների համար):

Այս փոփոխությունների արդյունքում՝ 2004 թ. միջին ընտանեկան նպաստի չափը կազմել է շուրջ 9000 դրամ՝ նախորդ տարվա 7000 դրամի փոխարեն, իսկ նպաստի չափի աճը նախորդ տարվա համեմատ՝ ավելի քան 28%:

2005 թ. ընտանիքի անապահովության սահմանային մեծությունը նախորդ տարվա 35 միավորից դարձել է 34 միավոր, իսկ աղքատության ընտանեկան նպաստի բազային մասը 6000 դրամ՝ 2004 թ. 4500 դրամի փոխարեն: Չզալի բարձրացել է նաև մինչև 18 տարեկան երեխաներին տրվող հավելումների չափը՝ 3000-ից կազմելով 4500 դրամ (տարբերակված անապահովության միավորից եւ բարձր լեռնային եւ սահմանամերձ բնակավայրերում բնակվելու հանգամանքից): Աղքատության ընտանեկան համակարգում ընդգրկված ընտանիքներում երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ օգնության չափը սահմանվել է 35 000 դրամ:

Առաջիկայում կշարունակվի աղքատության ընտանեկան նպաստ եւ միանվագ դրամական օգնություն ծրագրի ծախսերի աճը: Ոլորտի գերակայությունները կշարունակվենի մնալ սոցիալական աջակցության ծրագրերում՝ հասցեականության մեծացումը, սոցիալական ապահովության եւ ապահովագրության ծրագրերում՝ արդյունավետության մեծացումը, պետական ծրագրերում՝ երեխաների նկատմամբ իրականացվող ծրագրերի առաջնահերթությունը:

Շարունակվեց կենսաթոշակների չափերը բարձրացնելու քաղաքականությունը, եւ եթե 2000 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում միջին կենսաթոշակը կազմել էր 4.400 հազար դրամ, ապա 2004 թ. միջին կենսաթոշակի չափը կազմում էր մոտ 8200 դրամ:

Մշակվել են օրենքներ եւ իրավական այլ ակտեր, որոնք ապահովելու են կենսաթոշակային համակարգի աստիճանական վերափոխումները եւ առաջիկա 3-5 տարիների ընթացքում նաև կուտակային կենսաթոշակային ապահովագրության իրականացումը, սոցիալական ապահովության քարտերի համակարգի կիրառումը:

Առաջիկայում կկարելորդվի նաև կենսաթոշակների ամենամյա բարձրացումը՝ այն հաշվով, որ միջին կենսաթոշակը մոտենա մեկ շնչի համար աղքատության ընդհանուր գծին:

4.4 Բնապահպանություն

Բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքներն ուղղված են եղել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի հետագա կատարելագործմանը եւ առաջնահերթ հիմնախնդիրների լուծմանը:

Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում վերջին տարիների հիմնական ձեռքբերումներն են՝

1. Բնապահպանության ոլորտը կանոնակարգող բազմաթիվ օրենսդրական ակտերի ընդունումը, որոնցից առանձնահատուկ ուշադրության արժանի են.

- Հայաստանի Հանրապետության Նոր Զրային օրենսգրքի ընդունումը, որը նպաստեց ջրային ռեսուրսների պահպանության ու օգտագործման նոր քաղաքականության ձևավորմանը, հստակեցրեց ջրային ռեսուրսների պահպանության եւ օգտագործման կառավարման մեխանիզմներն ու գործընթացները, ինչպես նաև ապահովում է ջրային ռեսուրսների ջրային համակարգերի ներդաշնակ կառավարումը,

● «Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենսգրքի ընդունումը, որով ամրագրվեցին ընդերքի պահպանության եւ օգտագործման նոր սկզբունքներ ու մոտեցումներ՝ ապահովելով օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման մրցակցային դաշտի ձեւավորումը, շուկայական հարաբերությունների զարգացումն ու ներդրումների ավելացումը,

● «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը, ինչը հնարավորություն կտա կանոնակարգել հանրապետությունում թափոնների գործածության հետ կապված հարաբերությունները,

● ՀՀ Ազգային ժողովի կողմից 3-րդ ընթերցմամբ ընդունված «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որը կապահովի բնապահպանական օրենսդրությամբ ամրագրված նորմերի ու պահանջների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացումը՝ դրանով իսկ նպաստելով բնապահպանական օրինախախտումների կանխարգելմանը:

Բացի վերը նշվածից, մշակվել են բնապահպանության ոլորտի գծով ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք փաստաթղթեր՝

● Հայաստանի Հանրապետության անտառի ազգային քաղաքականությունը եւ ռազմավարությունը,

● ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիրը,

● ավտոտրանսպորտից վնասակար արտանետումների նվազեցման հայեցակարգը:

2. Միջազգային հանրության կողմից բնապահպանական խնդիրների գերակայության ճանաչման պայմաններում կտրուկ աճել է բնապահպանական ուղղվածություն ունեցող քաղաքականության կիրարկումը Հայաստանում, որի արդյունքում վերջին տարիներին շրջակա միջավայրի պահպանության հարցերը շոշափելիորեն ինտեգրվում են սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության հետ, ինչն ակնհայտ ձեռքբերում է Հայաստանի Հանրապետության պետականության կայացման եւ կայուն զարգացման գործընթացում:


Անցած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք կարեւոր միջազգային համաձայնագրեր, այդ թվում՝

● ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումներ ընդունելուն հասարակայնության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» կամ Օրիուսի Կոնվենցիան: 2001 թ. ՀՀ կողմից Կոնվենցիայի վավերացումը զգալի քայլ է «բնապահպանական ժողովրդավարության» իրականացման բնագավառում,

● 2002 թ. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային Կոնվենցիայից բխող Կիոտոյի արձանագրությունը, որը հնարավորություն կընձեռնի Հայաստանում Մաքուր զարգացման մեխանիզմների (CDM) ծրագրերի իրականացմանը՝ ապահովելով արտերկրյա ներդրումների հաշվին հանրապետության մի շարք առաջնահերթ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի եւ միջոցառումների իրականացումը:

3. 1999թ.-ից Սեւանա լճից Էներգետիկ նպատակներով ջրբացթողումների դադարեցումը, Սեւանա լճի մակարդակի բարձրացման կայուն միտումները (այն շարունակական բնույթ ունի), 2002թ.՝ 44սմ, 2003թ.՝ 48 սմ, 2004թ.՝ 41 սմ :

4. Բևոզտագործման հաշվառվող ծավալների ավելացման եւ բնապահպանական տեսչական աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ բնապահպանական եւ բևոզտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերի զգալի աճը (1998թ. համեմատ աճել են ավելի քան 5 անգամ), որը հնարավորություն է ընձեռել մի քանի անգամ ավելացնել բնապահպանության ոլորտի ֆինանսավորման ծավալները:



Աղբյուրը՝ ՀՀ բնապահպանության նախարարություն

5. ՀՀ նոր Ջրային օրենսգրքի համաձայն ձեւակերպված ջրօգտագործման թույլտվություններով իրավական դաշտ է բերվել հանրապետության ջրօգտագործման ծավալի շուրջ 90%-ը:

6. Ավտոտրանսպորտի արտանետումների կրճատման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից 2001թ. ընդունվել է որոշում՝ էթիլացված բենզինի արտադրության, օգտագործման եւ ներմուծման արգելման վերաբերյալ, որով Հայաստանը կատարեց իր ստանձնած պարտավորությունները՝ ՀՀ «Կապարացված բենզինի աստիճանական վերացման համաեվրոպական ռազմավարության», ինչպես նաեւ ՀՀ «Օրակարգ 21-ի» 9.15 կետի պահանջների նկատմամբ:

7. ՀՀ բնապահպանության նախարարությունը ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) եւ ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (UNDP) օժանդակությամբ մշակել է ՀՀ «Օգոնային շերտը քայքայող նյութերի փոխարինման» ազգային ծրագիրը, եւ ներկայում սկսված է այդ ծրագրում ընդգրկված նախագծերի իրականացումը, որոնք ենթադրվում է ավարտել 2007թ. դեկտեմբերին:

Կլիմայի փոփոխության Կոնվենցիայի շրջանակներում, մեկնարկել է ջերմամատակարարման վերականգնմանը նպատակաուղղված ծրագիր, որը ֆինանսավորվում է ԳԷՖ-ի կողմից:

Գործընթացներ են սկսվել նշված Կոնվենցիայի Կիոտոյի արձանագրության ՀՀ «Մաքուր զարգացման մեխանիզմի» շրջանակներում մի շարք նախագծեր իրականացնելու ուղղությամբ:

8. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի ստեղծումը, որի գումարները պահպանվելու են ՀՀ կենտրոնական բանկի հատուկ հաշվում եւ բացառապես օգտագործվելու են ընդերքի շահագործման հետեւանքով խախտված տարածքների ռեկուլտիվացիայի, հարթեցման, կանաչապատման, ծառատնկման եւ կառուցապատման աշխատանքների իրականացման համար:

2005-2007թթ. բնագավառի զարգացումն իրականանալու է Շրջակա միջավայրը Եվրոպայի համար գործընթացի շրջանակներում 2003թ. Կիեւում կայացած Համաեվրոպական Նախարարական կոնֆերանսում ընդունված Արեւելյան Եվրոպայի, Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի 12 երկրների շրջակա միջավայրի պահպանության ռազմավարությանը համահունչ, այդ փաստաթղթով նախանշված ներքոհիշյալ գերակայություններին համապատասխան՝

- շրջակա միջավայրի որակի ստանդարտների օպտիմալացում,
- թույլտվությունների համակարգի բարեփոխում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պրակտիկայի կատարելագործում,
- բնապահպանական օրենսդրության կատարման ապահովում եւ բնապահպանական դատական համակարգի ամրացում,
- աղտոտման եւ բնական ռեսուրսների համար վճարվող վճարների բարեփոխում/օպտիմալացում,
- բնապահպանական ապահովագրության եւ բնապահպանական վնասի փոխհատուցման համակարգերի բարեփոխում,
- բնապահպանական մոնիտորինգի համակարգի ուժեղացում,
- բնապահպանական գործունեության պլանավորման նոր համակարգի ներդրում,
- քաղաքականության մշակման եւ իրականացման ընթացքում միջգերատեսչական համագործակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծում:
- ինստիտուցիոնալ ներուժի ուժեղացում:

Բյուջետային հատկացումները նպատակաուղղվելու են Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների ծրագրով նախատեսված հրատապ հիմնախնդիրների լուծմանը: Մասնավորապես, Սեւանա լճի, կենսաբանական եւ լանդշաֆտային բազմազանության պահպանության ուղղությամբ, պայքար անապատացման գործընթացի դեմ, վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ հեռացման հիմնախնդիրների լուծման, ինչպես նաեւ ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ներդրման եւ բնապահպանական պետական տեսչական համակարգի հզորությունների ամրապնդման ուղղությամբ:

4.5 Մեակույթ

2000-2004թթ. մշակութային քաղաքականությունն իրականացվել է մշակույթի պահպանման, տարածման եւ զարգացման հայեցակարգային հիմնադրույթներով ամրագրված սկզբունքներին եւ ուղղություններին համապատասխան, որի հիմնական նպատակը մշակութային ժառանգության պահպանումն ու անխաթար փոխանցումն է սերունդներին, աջակցումը գեղարվեստական ստեղծագործական գործունեությանը եւ նպաստումը մշակութային արժեքների ներկայացմանն ու տարածմանը: Պետական մշակութային քաղաքականության իրականացման եւ բնագավառի կառավարումը կանոնակարգելու նպատակով մշակվել եւ ընդունվել են մի շարք օրենքներ՝ մշակութային օրենսդրության հիմունքների, արխիվային գործի, մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման, մշակույթի պահպանման, տարածման եւ զարգացման 2004թ. պետական ծրագրի մասին: Ընդունվել են նաեւ հիշյալ օրենքներից բխող եւ դրանց կիրարկումն ապահովող օրենսդրական եւ գերատեսչական մի շարք ակտեր: Ներկայում շրջանառության մեջ են դրվել գրադարանային, թանգարանային, թատրոնի եւ կինոյի բնագավառների կառավարումը կանոնակարգող իրավական ակտերի նախագծեր:

2003 թվականին Լինսի հիմնադրամի միջոցներով, «Մշակութային օջախների վերականգնում» ծրագրի շրջանակներում վերանորոգվել է 15 թատրոն եւ համերգային դահլիճ, 13 թանգարան: Այն իրականացնելու համար 2003թ. հատկացվել է 7617.3 մլն դրամ:

ՀՀ 2003թ. եւ 2004թ. պետական բյուջեով մշակույթի ոլորտի աշխատողների աշխատավարձի բարձրացումը՝ համապատասխանաբար 30%-ով եւ 17 %-ով՝ հնարավորություն ընձեռեց նրանց միջին աշխատավարձը հասցնել 16151 դրամի՝ 2002 թվականի 10619 դրամի փոխարեն:

Մշակույթի ոլորտում 2005-2007թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված ծրագրերը կիրականացվեն 22 պետական կառավարման մարմինների միջոցով, որոնց համար գլխադասային մարմին է հանդիսանում ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը:

ՀՀ-ում մշակութային միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով այժմ շրջանառության մեջ գտնվող «Մշակույթի պահպանման, տարածման եւ զարգացման 2005-2007 թթ. պետական եռամյա ծրագրի» նախագծով նախատեսվում է մշակույթի ոլորտում բարեփոխումների շարունակականություն եւ կայուն զարգացման ապահովում՝ ըստ առանձին ուղղությունների:

Միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղված են մշակույթի ոլորտի հետեւյալ հիմնական գերակայությունների իրականացմանը.

- ստեղծագործական գործունեության աջակցում եւ խթանում,
- մշակութային ժառանգության պահպանություն,
- մշակութային արժեքների տարածում,
- հասարակական ստեղծագործական ներուժի օգտագործում (վերարտադրում) եւ զարգացում,
- մշակութային զարգացման իրավական եւ տնտեսական կարգավորում:

4.5.1 Երիտասարդության հարցեր

Պետական երիտասարդական քաղաքականությունը եւ նրա հետեւողական զարգացումը մշտապես եղել է ՀՀ կառավարության գործունեության առաջնահերթություններից մեկը:

2000-2004թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից հատկացումները՝ պետական երիտասարդական քաղաքականության ոլորտի զարգացմանը ունեցել են հետեւողական աճ: 2000թ. ոլորտի զարգացմանը հատկացվել է 108.5 մլն. դրամ, 2002թ.՝ 153.075 մլն. դրամ, 2003թ.՝ 197.875 մլն. դրամ, իսկ 2004թ. հատկացված գումարը կազմել է 233.811 մլն դրամ: 2002թ. սկսած՝ ՀՀ պետական բյուջեից պետական երիտասարդական քաղաքականության ոլորտի զարգացմանը տրամադրված հատկացումները, 2000 թ. համեմատ ունեցել են համապատասխանաբար 2002 թ.՝ 141%, 2003 թ.՝ 182% եւ 2004 թ.՝ 215% աճ:

Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացման ապահովման հարցում առանձնահատուկ կարեւորություն ունի Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2000 թ. նոյեմբերի 7-ի թիվ 734 որոշմամբ ստեղծված՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդը, որի նպատակն է՝ երիտասարդական քաղաքականության ռազմավարության մշակումը եւ ոլորտի կառավարման համակարգվածության ապահովումը, երիտասարդության սոցիալական պաշտպանվածության ապահովումը, ստեղծագործական ներուժի համակողմանի օգտագործումը, ինչպես նաեւ հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական եւ հոգեւոր-մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության համակարգումը: Խորհրդի կազմում ընդգրկված են ՀՀ պետական կառավարման մարմինների եւ երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2004 թ. սկսվել է Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին կից երիտասարդության հարցերի խորհուրդների ստեղծման գործընթացը, որոնց նպատակը տեղերում երիտասարդների եւ երիտասարդական կազմակերպությունների ակտիվ ներգրավվածության եւ մասնակցության ապահովումը, երիտասարդությանն առնչվող որոշումների կայացումն ու դրանց իրագործումն է:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ 2004թ. մարզպետարանների աշխատակազմերում վերականգնվեց երիտասարդության հարցերի մասնագետի հաստիքը:

2002թ. ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն հիմնադրամը, որի ստեղծման նպատակը հանրապետության, Սփյուռքի եւ արտերկրի երիտասարդների համագործակցության զարգացումն է, համատեղ ծրագրերի մշակումն ու իրականացումը:

2002թ. ստեղծվել է «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առետրային կազմակերպությունը, որի նպատակը պետական երիտասարդական քաղաքականությանն ուղղված ծրա-

գրերի եւ միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացումն է: Երիտասարդական քաղաքականության արդյունավետ իրականացումը պահանջում է իրավական դաշտի ապահովում՝ ոլորտի գործունեությունը կարգավորող օրենքների եւ այլ իրավական ակտերի ստեղծման միջոցով:

2004 թ. ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել եւ 2005 թ. ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2004 թ. ընթացքում ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության կողմից մշակվել եւ 2005 թ. շահագրգիռ նախարարությունների եւ պետական այլ մարմինների կողմից արված առաջարկությունների հիման վրա վերամշակվելուց հետո, ՀՀ կառավարության հաստատմանը կնեքկայացվի «Պետական երիտասարդական քաղաքականության 2005-2008 թվականների ռազմավարության» նախագիծը:

Այդ ռազմավարությունը հիմք կհանդիսանա պետական երիտասարդական երկարաժամկետ քաղաքականության իրականացման համար:

2005թ. մարտից սկսվել են Հայաստանի երիտասարդության մասին ազգային զեկույցի պատրաստման աշխատանքները: 2000-2004 թթ. ընթացքում իրականացված պետական երիտասարդական քաղաքականությանն ուղղված միջոցառումները եւ ծրագրերն ուղղված են եղել երիտասարդի սոցիալական կայացմանը, նրա ստեղծագործ ներուժը ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործման համար սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգեւոր-մշակութային, կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ ստեղծելուն: Իրականացվել են համահայկական, հանրապետական միջազգային եւ տարածաշրջանային նշանակության համաժողովներ, փառատոներ, գիտաժողովներ, դասընթացներ, որոնց ապահովվել է ոչ միայն հանրապետության, այլեւ Արցախի, Ջավախքի եւ Սփյուռքի երիտասարդության մասնակցությունը: Մշակութային, սոցիալական ուղղվածության միջոցառումներ, երիտասարդական այցելություններ, շինչոկատներ են կազմակերպվել Արցախում եւ Ջավախքում, նպատակ հետապնդելով Հայաստանի եւ ԼՂՀ ու Ջավախքի երիտասարդության միջեւ կապերի ու համագործակցության զարգացումը: Մեծ ուշադրություն է դարձվել ՀՀ մարզերում երիտասարդության շրջանում առկա հիմնախնդիրների լուծմանը, երիտասարդական կամավորական աշխատանքների խթանմանը:

2005-2006թթ. պետական երիտասարդական քաղաքականության իրականացման արդյունավետությունը ՀՀ մարզերում բարձրացնելու նպատակով նախատեսվում է երիտասարդական կենտրոնների ստեղծում մարզերում, որոնց գործառույթը պետք է լինի պետական երիտասարդական քաղաքականության իրականացումը տեղերում, երիտասարդներին ամենօրյա, բազմակողմանի, տեղեկատվական, խորհրդատվական, հոգեբանական, իրավական, սոցիալ-տնտեսական, մշակութային եւ այլ բնույթի ծառայությունների մատուցումը:

2004 թ. հիմնվել է պետական երիտասարդական քաղաքականության եւ երիտասարդության հիմնահարցերը լուսաբանող թերթ, որտեղ վեր են հանվում

երիտասարդների հիմնախնդիրները, հնարավորություն է տրվում երիտասարդներին եւ երիտասարդական կազմակերպություններին ներկայացնել իրենց գործունեությունը, հրապարակավ արտահայտել կարծիքներ եւ նպատակ է հետապնդում՝ բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը երիտասարդության վերաբերյալ:

2004 թ. ստեղծվել է ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության էլեկտրոնային էջը:

2000-2004 թթ. ընթացքում մեծ ուշադրություն է դարձվել երիտասարդության ոլորտում միջազգային համագործակցության եւ կապերի զարգացմանը: Ակտիվ համագործակցություն է ընթացել միջազգային կազմակերպությունների հետ: Այս հարցում 2004 թ. կարեւոր ձեռքբերումներից է Եվրախորհրդի երիտասարդության հարցերով ղեկավար կոմիտեի բյուրոյի կազմում Հայաստանի Հանրապետության ընդգրկումը:

Երիտասարդական հասարակական ոլորտի կարեւոր ձեռքբերումներից է 2004 թ. նոյեմբերին «Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի» Եվրոպայի երիտասարդական Ֆորումի (Youth Forum) լիիրավ անդամ դառնալը:

Երիտասարդության ոլորտում՝ միջազգային համագործակցության զարգացման առումով, կարեւորվում է ոչ միայն համագործակցությունը տարբեր կարգի միջազգային կառույցների շրջանակներում, այլեւ երկկողմանի կապերի հաստատումը, համաձայնագրերի կնքումը եւ համատեղ ծրագրերի իրականացումը: 2005 թ. ընթացքում երիտասարդության ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագրեր կնքվեն Բուլղարիայի, Կիպրոսի, Ղրղզստանի, Տաջիկստանի հետ:

4.6 Աղֆասության հաղթահարում եւ կոռուպցիայի դեմ ղայֆար

2000-2003 թթ. կառավարությունը հասարակության հետ համատեղ քըննարկեց աղքատության խնդիրները եւ լուծման ուղիները: 2003 թ. գործադիրը հավանության արժանացրեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» եւ ձեռնամուխ է եղել դրա իրականացմանը:

Ծրագիրը հաստատելուց հետո, 2004թ. հունվարին, կառավարությունը հաստատել է նաեւ ԱՀՌԾ կատարումն ապահովող 2004-2006թթ. միջոցառումների ցանկը՝ միաժամանակ սահմանելով նաեւ այդ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ ըստ եռամսյակների պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվության ներկայացման մեխանիզմը:

2003-2004 թթ. զարգացումները բավականին հուսադրող են եւ դրանց արդյունքում ձեւավորված իրավիճակն, ընդհանուր առմամբ, ավելի բարենպաստ է, քան նախատեսվում էր ԱՀՌԾ զարգացման սցենարով: Մասնավորապես, տնտեսությունն աճել է ծրագրվածից գրեթե կրկնակի արագ տեմ-

պերով, զգալի աճել են զբաղվածությունից բնակչության դրամական եկամուտները, պետությունը շարունակել է նպատակաուղղված ծախսային քաղաքականության իրագործումը (մասնավորապես, սոցիալական ոլորտներում եւ ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ):

Այդուհանդերձ, 2003թ. աղքատության եւ անհավասարության կրճատման դրական միտումներին զուգահեռ, բացահայտվել են որոշ խնդիրներ, եւ կառավարությունը մտադիր է իր առաջիկա ծրագրերում կատարել համապատասխան ճշգրտումներ՝ միտված այդ խնդիրների լուծմանը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է տարածքային կտրվածքով զարգացման անհամամասնություններին, ինչպես նաեւ խոցելի սոցիալական խմբերի բարեկեցության հարցերին:

«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» իրականացման հաջող ընթացքը մեծապես պայմանավորված է ինչպես քաղաքացիական հասարակության եւ մասնավոր հատվածի, այնպես էլ դոնոր համայնքի՝ գործընթացին ներգրավմամբ եւ ակտիվ մասնակցությամբ: Այս ուղղությամբ արդեն ձեւավորվել են ինստիտուցիոնալ կառույցները այն է՝ ծրագրի իրականացման համակարգող խորհուրդը, բաց ֆորումը եւ աշխատանքային խումբը:

Ծրագրի արդյունքների գնահատման եւ հետազայում դրա վերանայումն առավել արդյունավետ դարձնելու համատեքստում առանցքային դերակատարում ունի ծրագրի մոնիտորինգի համակարգի մշակումն ու ներդրումը, որը իրականություն դարձավ 2004թ., եւ այժմ աշխատանքներ են տարվում համակարգի արդյունավետ կիրարկման ուղղությամբ:

ԱՅՈՏ գործունեության մեկ տարին ակնհայտորեն ցույց տվեց աղքատ բնակչության թվաքանակի նկատելի եւ շատ աղքատ բնակչության՝ առաջանցիկ կրճատումը 2001-2003թթ. ընթացքում:

	1999	2001	2002	2003		
	փաստացի			փաստ.	ԱՅՈՏ	Փաստ. / ԱՅՈՏ, %
ՀՆԱ՝ 1 շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	575.0	658.8	739.6	893.9	780.0	114.6
Աղքատների թվաքանակը (%)՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	55.1	50.9	49.7	42.9	46.2	92.8
այդ թվում՝ շատ աղքատների թվաքանակը (%)՝ բնակչության թվաքանակի նկատմամբ	22.9	16.0	13.1	7.4	15.2	48.6
Եկամուտների համակենտրոնացման Զինի գործակիցը	0.593	0.535	0.451	0.434	0.51	85.1
Ամենաաղքատ բնակչության եկամուտները (%)՝ ամենահարուստների եկամուտների նկատմամբ	3.6	5.9	6.8	7.5	6.9	108.7

Աղբյուրը՝ 33 ազգային վիճակագրական ծառայություն

Աղքատության եւ անհավասարության կրճատման այն ցուցանիշները, որոնց հաջողվել է հասնել 2003թ., համապատասխանում են ԱՅՌԾ ավելի ուշ ժամանակահատվածի նպատակադրումներին: Մասնավորապես, ՀՆԱ մեկ շնչի հաշվով 2003թ. փաստացի ցուցանիշը համապատասխանում է ԱՅՌԾ 2004թ. կանխատեսումներին: Աղքատ բնակչության 42.9% ցուցանիշին նախատեսվում էր հասնել 2005թ. ընթացքում: 2001-2003թթ. ընթացքում տեղի է ունեցել շատ աղքատ բնակչության քանակի զգալի կրճատում:

Ընդհանուր ընթացիկ եկամուտների, ինչպես նաև ծախսերի համակենտրոնացման Ձիևի գործակցի 2003թ. մեծությունները (համապատասխանաբար 0.434 եւ 0.271) վկայում են անհավասարության որոշակի կրճատման մասին: 2003թ. գրանցված ընթացիկ եկամուտների համակենտրոնացման Ձիևիի գործակցի մակարդակներին նախատեսվում էր հասնել շատ ավելի երկարաժամկետ հատվածում:

ԱՅՌԾ իրականացման առաջին տարվա զարգացումներով, ինչպես նաև միջնաժամկետ հատվածի հնարավոր նոր միտումներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել վերանայել եւ ճշգրտել ԱՅՌԾ հիմնական նպատակային ցուցանիշները եւ այդ առումով կառավարության առաջիկա քայլերը կուղղվեն ծրագրի վերանայմանը:

4.6.1 Հակակոռուպցիոն ռազմավարություն եւ դրա իրականացման միջոցառումներ

Պետևս 2001թ. ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ծրագրերի հետ կապված աշխատանքները համակարգող հանձնաժողով: Վերջինիս գործունեության արդյունքում նույն թվականին, միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, մշակվեց հակակոռուպցիոն ռազմավարության հայեցակարգը՝ հիմք դառնալով արդեն 2003թ. տարեվերջին հաստատված «Հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա իրականացման միջոցառումների ծրագրի» համար: Կառավարությունը, չսպասելով հիշյալ ծրագրի մշակման ավարտին, նախորդ 3-4 տարիներին որոշակի քայլեր է ձեռնարկել, ե՛ւ օրենսդրական դաշտում, ե՛ւ պետական կառավարման համակարգում, որոնք ակնհայտ հակակոռուպցիոն բնույթ են կրում: Ծրագրի ընդունումից հետո այդ աշխատանքը շարունակվեց: ՀՀ նախագահի 2004թ. հունիսի 1-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին» հրամանագրին համապատասխան, ստեղծվել է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով:

Ըստ ժամանակացույցի հաստատված միջոցառումների կատարման ընթացքի պատկերը հետևյալն է.

2004-2007թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրով նախատեսված է իրականացնել 98 միջոցառում, որից՝

- 9 միջոցառում՝ 2003թ. ընթացքում - (կատարվել են բոլորը),

- 18 միջոցառում՝ 2004թ. ընթացքում (կատարվել են 17-ը, 1-ը՝ 4.23 կետը՝ «Մագիստրատուրայում ուսուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը» կկատարվի 2005թ.՝ «Բարձրագույն եւ հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, որը ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 2004թ. դեկտեմբերին):
- 48 միջոցառում՝ 2004-2005թթ. միջեւ ընկած ժամանակահատվածում, (կատարվել են 32-ը, 16 միջոցառում կատարման ընթացքի մեջ են)
- 16 միջոցառում՝ 2004-2006թթ. միջեւ ընկած ժամանակահատվածում, (կատարվել են 4-ը, 12 կատարման ընթացքի մեջ են)
- 3 միջոցառում՝ 2004-2007թթ. միջեւ ընկած ժամանակահատվածում, (3-ն էլ կատարման ընթացքի մեջ են)
- 4 միջոցառում՝ պարբերաբար (դրանք կրում են քարոզչական կամ ուսուցողական բնույթ):

Ընդհանուր առմամբ, նախատեսված 98 միջոցառումից 2003-2004 թթ. ընթացքում լիարժեք կատարվել է 62-ը, մնացածը կատարման ընթացքի մեջ են.*

5 Ինստիտուցիոնալ բարեփոխումները

քաղաքականության արդյունքները եւ անելիքները

5.1 Պեճական կառավարում

Վերջին տարիների տնտեսական եւ սոցիալական ոլորտներում ձեռքբերումները հաստատեցին, որ պետական կառավարման ոլորտում իրականացվող քաղաքականությունը տալիս է սպասված արդյունքը:

Վերջին հինգ տարիներին պետական կառավարման համակարգի բարեփոխումները եղել են կառավարության ուշադրության կենտրոնում: Իրականացվել են կառուցվածքային բարեփոխումներ, որոնցով բարձրացվել է ծառայությունների մատուցման որակը եւ մատչելիությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը եւ վերահսկելիությունը:

Հստակեցվել են նախարարությունների կանոնադրությունները՝ բացահայտվել են կրկնվող, ավելորդ, տվյալ մարմինն ոչ բնորոշ գործառնությունները, ինչպես նաեւ դրանք իրականացնող ստորաբաժանումները: Բոլոր նախարարություններում, տարածքային կառավարման մարմիններում ներդրվել է

քաղաքացիական ծառայություն՝ քաղաքական, հայեցողական եւ սպասարկող պաշտոնները տարանջատելով քաղաքացիական ծառայողներից:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումների ուղղությամբ կարելու ձեռքբերում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի ընդունումը, որը մի կողմից երաշխավորում է պետական ծառայողների պաշտոնավարությունը՝ անկախ քաղաքական իշխանության փոփոխությունից, մյուս կողմից՝ սահմանում մասնագիտական գիտելիքների եւ փորձի պահանջներ՝ համապատասխան պաշտոն զբաղեցնելու համար:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումների ոլորտի ձեռքբերումների թվում անհրաժեշտ է նշել նաեւ 2001թ. հոկտեմբերի 24-ին ընդունված «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության կազմակերպման, ղեկավարման, ծառայության անցնելու եւ ծառայությունը դադարեցնելու, ծառայողական առաջխաղացման, դիվանագիտական աստիճաններ շնորհելու, դիվանագիտական ծառայություն իրականացնող անձանց իրավական վիճակի սահմանման, ծառայության ընթացքում եւ դրանից հետո դիվանագետների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքների, դիվանագիտական ծառայության մարմինների ֆինանսավորման սկզբունքների, ինչպես նաեւ դիվանագիտական ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:

2004թ. պետական կառավարման մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության եւ որոշումների կատարման էլեկտրոնային վերահսկողության համակարգի ներդրման նպատակով մշակվել եւ ընդունվել է «Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

2005-2007թթ. նախատեսվում է հզորացնել քաղաքացիական ծառայության կառավարումը: Նախատեսվում է պետական ծառայությունների մատուցման կառավարման մոդելների եւ մեխանիզմների բարելավում, որի հիմնական խնդիրն է լինելու անցում կատարել կառավարման առավել ռացիոնալ կառուցվածքի՝ ըստ նախարարությունների հստակեցնելով հանրային ծառայությունների մատուցման գործում լիազորությունները, գործառնությունների ապակենտրոնացման, ապակոնցենտրացման եւ դրանց տեսակների դասակարգման հարցերը:

Նշված հարցերին զուգահեռ, կբարձրացվեն պետական ծառայողների աշխատավարձերը, ինչպես նաեւ հնարավորության սահմաններում տեխնիկապես կվերագինվի յուրաքանչյուր աշխատատեղ:

5.2 Դասաիրավական համակարգ

Վերջին տարիների դատաիրավական բարեփոխումների նպատակն է եղել ամրապնդել դատական կառավարումը՝ դատարանների նախագահների խորհրդի աջակցություն ցույց տալու միջոցով, բարելավել դատական գործավարության գործընթացները, ամրապնդել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, կատարելագործել դատավորների ու իրավական մասնագետների հմտություններն ու կարողությունները, ինչպես նաեւ գործա-


րար հասարակությանն ու քաղաքացիներին ապահովել մատչելի ու համապարփակ իրավական տեղեկատվական համակարգով, իրականացնել դատարանների շենքերի կառուցման եւ վերակառուցման աշխատանքներ:

Դատական համակարգի բարեփոխումների իրականացման առումով, 2005-2007 թվականներին շարունակվելու է դատական բնագավառի կառավարման եւ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ամրապնդման, ինչպես նաեւ վերոնշյալ աշխատանքների իրականացումը:

5.3 Տեղական ինֆրակառավարում

Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգերի կատարելագործմանն ուղղված միջոցառումների հեռահար նպատակը պետական իշխանության ապակենտրոնացումն է: 2002թ., հիմնվելով տեղական ինքնակառավարման համակարգի առկա իրավիճակի եւ կուտակված փորձի վրա, ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքը, որն ավելի ընդարձակեց տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված ու պարտադիր լիազորությունների ցանկը, հստակեցրեց եւ ընդարձակեց այդ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ու այլ ռեսուրսային հնարավորությունները: Մասնավորապես, սահմանվեց պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների նվազագույն ծավալը, որը սահմանվեց նախորդ տարվա ՀՀ պետական բյուջեի եկամտային մասի 4%-ի չափով: Ի դեպ, 2003թ. հաջողվեց մարել համայնքային բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների նախորդ տարիների պարտքերը, իսկ դրանից հետո ապահովել դոտացիաների հատկացումը համաձայն եռամսյակային համամասնությունների եւ ամբողջ ծավալով:

Եթե մինչեւ 2003-ը համայնքներին տրամադրվող դոտացիաների կատարողականը ցածր էր 100 %-ից, ապա դրանից հետո համայնքներին տրամադրվող դոտացիաները տրվում են ժամանակին եւ ամբողջությամբ:



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն

Համայնքային բյուջեների եկամտային մասին ամրագրված հարկատեսակների, հատկապես գույքահարկի եւ հողի հարկի մասով, ընդլայնման ու հստակեցման համար կարելուք նշանակություն ունի համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի փոխանցումը համայնքային սեփականության եւ համայնքների վարչական սահմանների նկարագրությունը: Այս աշխատանքները ընթանում են մեծ թափով եւ կավարտվեն 2005 թվականի ընթացքում:

Որպես պետության կողմից համայնքներին պատվիրակված լիազորություն՝ սահմանվել է գույքահարկի եւ հողի հարկի գանձման լիազորությունը: Համապատասխան փոփոխություններ են կատարվել «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում, արդեն իսկ Երեւանի թաղային ու քաղաքային բոլոր համայնքներին է փոխանցվել գույքահարկի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, այդ համայնքները ապահովվել են համակարգչային անհրաժեշտ տեխնիկայով: Գործընթացը շարունակվում է նաեւ գյուղական համայնքների համար, շուրջ 150 գյուղական համայնքների արդեն փոխանցվել է համապատասխան տեղեկատվությունը եւ տրամադրվել է համակարգչային անհրաժեշտ տեխնիկա:

Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումները մշտապես քննարկվում են Եվրոպայի խորհրդի մոնիտորինգային խմբի եւ փորձագետների հետ: Նշված հարցերի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի մոնիտորինգային խմբի առաջարկությունները ամփոփ տեսքով ձեւակերպվել են Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպայի խորհրդի համատեղ աշխատանքային պլանում եւ կազմվել է համապատասխան ժամանակացույց:

Մշակվել եւ ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն են ներկայացվել մի շարք օրենսդրական նախաձեռնություններ, մասնավորապես, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին, համաձայն որի հարկային արտոնություններ են տրամադրվել չչահագործվող եւ խոտանվող տրանսպորտային միջոցների սեփականատերերին: Համապատասխան օրենքում փոփոխություններ կատարելու արդյունքում սահմանվել է, որ իրավաբանական անձանց բաժնեմասերի սեփականաշնորհման գումարներից 30%-ի չափով գումարներ են փոխանցվելու այն համայնքների բյուջեներ, որտեղ տեղակայված են այդ օբյեկտները:

Հատկապես կարելուք է եւ համակարգային նշանակություն ունի «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 2004 թվականին: Այն թույլ է տալիս ապահովել համայնքային ծառայողների սոցիալական պաշտպանվածությունը, կադրային կայունությունը, առաջխաղացումն ու որակավորման բարձրացումը:

ՀՀ կառավարությունը ընդունել է իրագործել է տարածքների զարգացմանն ուղղված մի ամբողջ շարք ծրագրային որոշումներ: Հատկապես ուշադրության կենտրոնում է եղել եւ հատուկ հոգաձության առարկա հանդիսացել սահմանամերձ ու բարձրլեռնային բնակավայրերի առաջնահերթ հիմնախնդիրների հայեցակարգային ծրագիրը: ՀՀ կառավարության կողմից մշակվել եւ իրագործվել են Մեղրու տարածաշրջանի, Տավուշի եւ Արագածոտնի մարզերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ծրագրերը:

Որպես այդ որոշումների հետագա զարգացում միջազգային կազմակերպությունների հետ միջկառավարական համագործակցության շրջանակներում մշակվել են ՀՀ կառավարության կողմից հաստատվել են Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի մարզերի զարգացման ռազմավարական ծրագրերը: Այժմ մշակման փուլում են Արարատի և Վայոց Ձորի մարզերի զարգացման ռազմավարական ծրագրերը:

Այս ծրագրերը նախատեսում են մարզերի համալիր զարգացումը, հաշվի առնելով համայնքային զարգացման ծրագրերը, հնարավորությունները և միտումները: Հատկապես կարելի է, որ հիշյալ ծրագրերն ունեն նաև ներդրումային փուլ, որը հնարավոր է դարձնում նախատեսված միջոցառումների իրականացում համայնքներում և մարզերում: Վերջինները հնարավոր կդարձնեն առարկայորեն հիմնավորել մշակված ծրագրերը և հեռանկարայնությունը: Մասնավորապես, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի զարգացման ծրագրերը, որոնք հաստատվել են ՀՀ կառավարության կողմից և արդեն սկսվել է դրանց իրականացման փուլը, ներդրումային փորձնական ծրագրերի համար ունեն նախատեսված շուրջ 2 մլն. ֆունտ ստեռլինգի համարժեք դրամ: Նման նախնական պայմանավորվածություն կա նաև Արարատի և Վայոց Ձորի մարզերի զարգացման ծրագրերի վերաբերյալ: Մյուս մարզերի համար զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման հնարավորությունը քննարկվում է գործընկեր կազմակերպությունների հետ:

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԴԱՏԱԿԸ, ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ	5
1.1 Տնտեսական աճ	5
1.2 Ներդրումներ եւ խնայողություններ	7
1.3 Տոկոսադրույքներ	9
1.4 Գներ	10
1.5 Արդյունաբերություն, գյուղատնտեսություն, ծառայություններ	10
1.6 Արտահանում	12
1.7 Աւելանալի վարձատրություն	14
1.8 Մասնավորեցում, ղեկավար գույքի կառավարում, անճարժ գույքի շուկա	15
1.9 Գործարար միջավայրի բարելավում, փոփոխ եւ միջին ձեռնարկատիրություն	17
1.10 Ֆինանսական եւ բանկային համակարգ	18
2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ	19
2.1 Բյուջեային համակարգ	19
2.2 Շահակային եւ մասնաշահակային համակարգ	21
2.3 Ծախսերի արդյունավետություն	22
2.4 Պետական դարձ	23
2.5 Միջազգային ֆինանսական համագործակցություն	24

**3. ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ
ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ**..... 26

3.1 Զրային ճնշություն..... 26

3.2 Ճանադարհային ճնշություն..... 27

3.3 Էներգետիկ համակարգ..... 28

3.4 Գյուղական ենթակառուցվածքներ..... 29

**4. ՄԱՐԳԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ
ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ**..... 30

4.1 Կրթություն..... 30

4.2 Առողջադաշտություն..... 32

4.3 Սոցիալական ադապտություն
եւ ադապտացիություն..... 34

4.4 Բնադաշտանություն..... 35

4.5 Մշակույթ..... 39

4.5.1 Երիտասարդության հարցեր..... 40

4.6 Աղբահարության հարթահարում
եւ կոռուպցիայի դեմ դայվար..... 42

4.6.1 Շակակոռուպցիոն ռազմավարություն
եւ դրա իրականացման միջոցառումներ..... 44

**5. ԻՆՍՏԻՏՈՒԿԻՈՆԱԿ ԲԱՐԵՓՈՒՅՈՒՄՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ**..... 45

5.1 Պետական կառավարում..... 45

5.2 Դասաիրավական համակարգ..... 46

5.3 Տեղական ինքնակառավարում..... 47



Հրատարակվում է
Միավորված ազգերի կազմակերպության
Չարգացման ծրագրի աջակցությամբ

ՀՀ կառավարության տեղեկատվության
և հասարակայնության հետ կապերի վարչություն
Տնտեսական բարեփոխումների
վերլուծական-տեղեկատվական կենտրոն

Ձեռավորումը
եւ համակարգչային էջադրումը՝
Ա.Բաղդասարյանի

Տպագրված է «ԳՎՍՊՐԻՆՏ» տպագրատանը
Տպաքանակ՝ 1000